



ՎԱՆԱԶՈՐ ՔԱՂԱՔԻ ԿՈՇՏ ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ԹԱՓՈՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՊԼԱՆ

2023-2027թթ



ք. ՎԱՆԱԶՈՐ, 2023թ

Վանաձոր համայնքի աղբահանության կառավարման ռազմավարական պլանը մշակվել է ԵՄ աջակցությամբ, «Դաշինք՝ հանուն կայուն և կանաչ կառավարման» ծրագրի շրջանակում, փորձագիտական թիմի կողմից, համայնքապետարանի աշխատակիցների և ծրագրային թիմի աջակցությամբ:

Արմեն Վարոսյան, «Դաշինք՝ հանուն կայուն և կանաչ կառավարման» ծրագրի՝ աղբահանության կառավարման գծով փորձագետ

Նատալյա Լափաուրի, «Դաշինք՝ հանուն կայուն և կանաչ կառավարման» ծրագրի ղեկավար

Բենիկ Նազարյան կոմունալ տնտեսության, բարեկարգման և շրջակա միջավայրի պահպանության բաժնի պետի ժ/պ Վանաձորի համայնքապետարան

Արմինե Փանոյան, «Դաշինք՝ հանուն կայուն և կանաչ կառավարման» ծրագրի՝ Աղբահանության ռազմավարության մշակման առաջադրանքի համակարգող

Համայնքի ղեկավարի 2022թ հունիսի 23-ի N 117-Ա Կարգադրությամբ ստեղծվել է Վանաձոր համայնքի աղբահանության կառավարման ռազմավարական պլանի մշակման Աշխատանքային խումբ, որի կազմը ներկայացվում է ստորև.

ԱԽ նախագահ

- Էդիկ Հունանյան, հ, Համայնքի ղեկավարի օգնական

ԱԽ քարտուղար

- Անուշ Մելիքյան, ԿՏԲ և ՇՄՊ բաժնի առաջատար մասնագետ

ԱԽ անդամներ

- Արեն Եղիազարյան, Իրավաբանական բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար
- Արմեն Այվազյան, ԵՀ, ԳԿ և Գ բաժնի պետի պետի ժամանակավոր պաշտոնակատար
- Վահե Գրիգորյան, Ֆինանսական բաժնի պետ
- Լիլյա Դավթյան ՋԾ, ԱԿ և ՏՏ բաժնի պետ
- Հայկ Համբարձումյան, «Նեցուկ» ՀՈԱԿ-ի պետ
- Արմեն Վարոսյան, «Ուրբան» կայուն զարգացման հիմնադրամ
- Արմինե Փանոյան, «ԿԿԿ» Դաշինք ծրագրի հաշվետվությունների գծով մասնագետ
- Վահե Պապանյան, ԿՏԲ և ՇՄՊ բաժնի առաջատար մասնագետ

Հապավումների ցանկ

ԱԸՊ	Արտադրողի ընդլայնված պատասխանատվություն
ԱՊԿ	Արտադրողի պատասխանատվության կազմակերպություն
ԱՐՄՍՍՍՍ	ՀՀ վիճակագրական կոմիտե
ԵՄ	Եվրոպական միություն
ԵՏՄ	Եվրասիական տնտեսական միություն
ԷՀԿ	Էկոլոգիապես համահունչ կառավարում
ԿԱՕ	Կազմակերպություններ և առևտրի օբյեկտներ
ԿԶՆ	Կայուն զարգացման նպատակ
ԿԹ	Կոշտ թափոն
ԿԿԹ	Կոշտ կենցաղային թափոն
ԿԿԹԿ	Կոշտ կենցաղային թափոնների կառավարում
ՀԱՀ	Հայաստանի ամերիկյան համալսարան
ՀԸԳՀ	Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագիր
ՀԿ	Հասարակական կազմակերպություն
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՀՈԱԿ	Քաղաքային ոչ առևտրային կազմակերպություն
ՆՕԿ	Նյութի օգտահանման կայան
Շ/Ք	Շինարարության և քանդման
ՇՄՆ	Շրջակա միջավայրի նախարարություն
ՊՄՀ	Պետություն-մասնավոր համագործակցություն
ՊՈԱԿ	Պետական ոչ առևտրային կազմակերպություն
ՏԻՄ	Տեղական ինքնակառավարման մարմին
ՏԿԵՆ	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն
ՏՀԿ	Տարանջատ հավաքման կենտրոն

Բովանդակություն

Հապավումների ցանկ	3
Բովանդակություն	4
Երախտագիտության խոսք	Ошибка! Закладка не определена.
Աղյուսակների ցանկ	6
Ներածություն. Ինչո՞ւ և ինչպե՞ս մշակել կոշտ թափոնների տեղական կառավարման պլան	8
Ուղեցույցի նկարագրություն. նպատակը և հիմնական օգտատերերը	Ошибка! Закладка не определена.
ԿԹ կառավարման քաղաքականությունները. միջազգային պարտավորություններ, ազգային գերակայություններ և առկա ռազմավարություն	Ошибка! Закладка не определена.
Ազգային օրենսդրություն և ԿԹ կառավարման տեղական պլանավորմանը ներկայացվող պահանջներ	12
Աղբահանության համակարգի 2021-2023 թթ. Ռազմավարությունը	13
ԿԹ կառավարման տեղական պլանավորմանը ներկայացվող պահանջներ	13
Ինստիտուցիոնալ կառուցակարգ. ազգային, տարածքային և տեղական կառավարման մարմինների դերը	13
Տեղական կարգավորումներ	14
ԿԹ տեղական կառավարման պլանավորման կարևորությունը և սույն Ուղեցույցի դերը	14
Պլանավորման գործընթացում հանրային մասնակցությունը	15
Տվյալների հավաքագրման պահանջներ և ստանդարտներ	15
ԿԹ տեղական կառավարման պլանի կառուցվածք	16
ԿԹ տեղական կառավարման պլանի իրագործման հաշվետվություն և մշտադիտարկում	17
1 ԱՌԿԱ ԻՐԱՎԻՃԱԿԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ	19
1.1 Ներածություն (պլանի ամփոփագիր)	20
1.2 Հիմնախնդիրներ, առաջնահերթություններ, տեսլական	21
1.3 Պլանավորման տարածքի բնութագիր	1
1.4 Թափոնների քանակ և բաղադրություն	2
1.5 Թափոնների գործածություն	Ошибка! Закладка не определена.
1.6 Իրազեկության ներկայիս մակարդակ	26
1.7 Ֆինանսավորում և բյուջե	30
1.8 Նախկինում սահմանված նպատակների մշտադիտարկում և գնահատում	Ошибка! Закладка не определена.
2 ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ	40
2.1 Կանխատեսումներ	40
2.2 Կանխադրոյթներ	41

2.3	Նպատակների և թիրախների սահմանում (կարճաժամկետ և միջնաժամկետ) Ошибка! Залладка не определена.	
2.4	Գործողությունների պլան (կարճաժամկետ և միջնաժամկետ)	47
2.5	Երկարաժամկետ զարգացում	50
2.6	Պլանավորված գործողությունների իրագործման համար պահանջվող բյուջե և ֆինանսավորում	50
2.7	Թափոնների կառավարման բյուջետավորում	59

ՀԱՎԵԼՎԱԾ Ա – ԿԹ տեղական կառավարման պլանի կառուցվածք 47

[ՀԱՎԵԼՎԱԾ Բ – ԿԿԹ կառավարման քաղաքականությունները, միջազգային պարտավորություններ, ազգային գերակայություններ և առկա ռազմավարություն](#)

ՀԱՎԵԼՎԱԾ Գ - Խառը չտեսակավորված կոշտ կենցաղային թափոններում սովորաբար պարունակվող վտանգավոր թափոնների ոչ ամփոփ ցանկ..... 63

ՀԱՎԵԼՎԱԾ Դ - Օգտակար նյութեր 79

2.8	Ռազմավարություններ և զեկույցներ	79
2.9	Ձեռնարկներ և ուղեցույցներ	79

ՀԱՎԵԼՎԱԾ Ե - ԿԹ տեղական կառավարման պլանի իրագործման հաշվետվության ձև..... 80

2.10	Հաշվետվության ամփոփագիր	80
2.11	Սահմանված նպատակների և թիրախների իրագործումը	80
2.12	Թերի իրագործված նպատակների վերլուծություն	82
2.13	ԿԹ կառավարման ընթացիկ պլանում փոփոխումների անհրաժեշտության վերլուծություն	82

ՀԱՎԵԼՎԱԾ Զ – ԿԹ տեղական կառավարման պլանավորման համար անհրաժեշտ որոշ ելակետային տվյալներ..... 83

2.14	Աղբի գոյացում	83
2.15	Թափոնների բաղադրություն	83

Աղյուսակների ցանկ

- Աղյուսակ 1 – Պլանավորման տարածքի նկարագրություն՝ ըստ տարածքի տեսակների (ներկա իրավիճակ)
- Աղյուսակ 2 - Ժողովրդագրական տեղեկություններ (ներկա իրավիճակ)
- Աղյուսակ 3 - Թափոն գոյացնող հիմնական աղբյուրների տեսակը և քանակը (ներկա իրավիճակ)
- Աղյուսակ 4 – Պլանավորման մեջ օգտագործվող թափոնների գործածության ձևերը և դրանց նկարագրությունը
- Աղյուսակ 5 - Թափոնների քանակն ըստ հիմնական հոսքերի և դրանց գործածության ձևերի (ներկա իրավիճակ)
- Աղյուսակ 6 - Թափոնների քանակն ըստ երկրորդային հոսքերի և դրանց գործածության փուլերի (ներկա իրավիճակ)
- Աղյուսակ 7 - Թափոնների բաղադրությունն ըստ բաժնեմասերի (ներկա իրավիճակ)
- Աղյուսակ 8 - Քաղաքներում կոշտ թափոնների հավաքն ըստ մեթոդի և բնակչության ծածկույթի (ներկա իրավիճակ)
- Աղյուսակ 9 - Աղբահանության գործող օպերատորներ
- Աղյուսակ 10 - Թափոնների տեղափոխումն ըստ հոսքերի և գործածության ձևի (ներկա իրավիճակ)
- Աղյուսակ 11 - Վերօգտագործում իրականացնող արտադրողներ (ներկա իրավիճակ)
- Աղյուսակ 12 - Վերանորոգման կարողություններ (ներկա իրավիճակ)
- Աղյուսակ 13 - Ոչ ֆորմալ հատվածի կողմից իրականացվող թափոնների տեսակավորում և օգտահանում (ներկա իրավիճակ)
- Աղյուսակ 14 - Թափոնների գործածության կայանքներ (ներկա իրավիճակ)
- Աղյուսակ 15 - Աղբավայրեր և աղբանոցներ (ներկա իրավիճակ)
- Աղյուսակ 16 - Աղբավայրերի մուտքի ճանապարհահատվածներ (ներկա իրավիճակ)
- Աղյուսակ 17 – ԿԹ տեղական կառավարման մեջ շահակիրների ներգրավվածության աստիճանը (ներկա իրավիճակ)
- Աղյուսակ 18 - ԿԹ տեղական կառավարման մեջ շահակիրների ներգրավվածությունն ըստ թափոնի հոսքերի (ներկա իրավիճակ)
- Աղյուսակ 19 - Անձնակազմի կարողությունների գնահատում (ներկա իրավիճակ)
- Աղյուսակ 20 – Հանրային իրազեկության ներկայիս մակարդակ
- Աղյուսակ 21 – Թափոնների կառավարման ծառայություններից բնակիչների գոհունակության մակարդակ
- Աղյուսակ 22 - Պլանավորման տարածքում բնակչության և ԿԱՕ-ների հետ կնքված պայմանագրերը
- Աղյուսակ 23 - Պլանավորման տարածքում աղբի կառավարման եկամուտներն ու ծախսերը վերջին տարում՝ ըստ եռամսյակների
- Աղյուսակ 24 - Բնակչությունից և ԿԱՕ-ներից գանձվող մուտքերը և հավաքման տոկոսները վերջին տարում՝ ըստ եռամսյակների
- Աղյուսակ 25 - Աղբահանության ընթացիկ վճարի մանրամասներ՝ ըստ հիմնական հոսքերի
- Աղյուսակ 26 - Թափոնների գործածության հասանելի տարբերակների արժեքն ըստ հոսքերի (ներկա իրավիճակ)
- Աղյուսակ 27 – Կոշտ թափոնների կառավարման ինքնարժեքը՝ ըստ հիմնական հոսքերի (ընթացիկ տարվա դրությամբ)
- Աղյուսակ 28 - ԿԹ կառավարման ներկայիս համակարգի ունակությունը՝ հասնելու նախկինում սահմանված նպատակներին՝ ըստ գործածության ձևի -
- Աղյուսակ 29 - ԿԹ կառավարման ներկայիս համակարգի ունակությունը՝ լուծելու բնապահպանական, առողջապահական և աշխատանքի անվտանգության խնդիրները
- Աղյուսակ 30 - ԿԹ կառավարման ներկայիս համակարգի արդյունավետությունը վարչական և կազմակերպական կառուցվածքի առումով
- Աղյուսակ 31 - Իրավախախտումների վիճակագրություն և վերլուծություն
- Աղյուսակ 32 - Տվյալների բացակայության (բացերի) վերլուծություն
- Աղյուսակ 33 - Նախկինում սահմանված նպատակների իրագործման համար անհրաժեշտ նախնական փոփոխություններ ԿԹ տեղական կառավարման ներկայիս համակարգում
- Աղյուսակ 34 - ԿԹ տեղական կառավարման ներկայիս համակարգի բնապահպանական, առողջապահական և աշխատանքի անվտանգության բնութագիրը բարելավելու համար անհրաժեշտ նախնական փոփոխություններ
- Աղյուսակ 35 - ԿԹ տեղական կառավարման ներկայիս համակարգի արդյունավետությունը վարչական և կազմակերպական կառուցվածքի առումով բարելավելու համար անհրաժեշտ նախնական փոփոխություններ
- Աղյուսակ 36 - Պլանավորման ժամանակաշրջանում կանխատեսելի փոփոխություններ

- Աղյուսակ 37 – Պլանավորման ժամանակաշրջանում թափոնների նախատեսված գոյացում և գործածության կարողությունների հասանելիություն
- Աղյուսակ 38 - ԿԹ գործածության միջնաժամկետ թիրախներ և դրանց հասնելու կարողությունների հասանելիություն պլանավորման ժամանակաշրջանում
- Աղյուսակ 39 - ԿԹ գործածության երկարաժամկետ թիրախներ և դրանց հասնելու կարողությունների հասանելիություն պլանավորման ժամանակաշրջանում
- Աղյուսակ 40 - ԿԹ տեղական կառավարման մեջ շահակիրների ներգրավվածության աստիճանը (պլանավորման ժամականաշրջանում)
- Աղյուսակ 41 - ԿԹ տեղական կառավարման մեջ շահակիրների ներգրավվածությունն ըստ թափոնի հոսքերի (պլանավորման ժամականաշրջանում)
- Աղյուսակ 42 - Անձնակազմի կարողությունների զարգացման նպատակներ
- Աղյուսակ 43 - Գործողությունների պլան կարճաժամկետ և միջնաժամկետ թիրախներին հասնելու համար
- Աղյուսակ 44 - Թափոնների գործածության նոր կայանքների ապագա ներդրումներ և անհրաժեշտ ուսումնասիրություններ (երկարաժամկետ հեռանկարում)
- Աղյուսակ 45 – Կարճաժամկետ միջոցառումների բյուջե և ֆինանսավորում
- Աղյուսակ 46 – Միջնաժամկետ միջոցառումների բյուջե և ֆինանսավորում
- Աղյուսակ 47 – Միջոցառում (Ա) - մանրամասն աշխատանքային պլան և բյուջե
- Աղյուսակ 48 - Միջոցառում (Բ) - մանրամասն աշխատանքային պլան և բյուջե
- Աղյուսակ 49 - Պլանավորման տարածքում աղբի կառավարման նախատեսվող եկամուտներն ու ծախսերը պլանավորման տարիներին
- Աղյուսակ 50 – Բնակչությունից, ԿԱՕ-ներից և այլ աղբյուրներից նախատեսվող մուտքերը պլանավորման տարիներին
- Աղյուսակ 51 - Կոշտ թափոնների կառավարման նախատեսված ինքնարժեքը՝ ըստ հիմնական հոսքերի (պլանավորման ժամանակաշրջանում)
- Աղյուսակ 52 – Հաշվետու ժամանակաշրջանում սահմանված նպատակների և թիրախների իրագործումը
- Աղյուսակ 53 - Հաշվետու ժամանակաշրջանում թերի իրագործված նպատակների վերլուծություն
- Աղյուսակ 54 - Տարվա ընթացքում առաջացած թափոնների հիմնական ցուցանիշները, 2015-2019 թթ, ՀՀ Վիճակագրական կոմիտե

Վանաձոր քաղաքի աղբահանության համակարգի ռազմավարական պլան

Հայաստանի Հանրապետության երրորդ քաղաք Վանաձորը դեռ խորհրդային տարիներին համամիութենական նշանակության արդյունաբերական քաղաք էր, միաժամանակ աչքի էր ընկնում իր անկրկնելի բնությամբ: Վանաձորը նաև առողջարանային քաղաք էր, այստեղ զարգացած էր զբոսաշրջությունը: 1988 թվականի ավերիչ երկրաշարժը, ԽՍՀՄ փլուզումից հետո սկիզբ առած պատերազմը, Հայաստանի շրջափակումը և էներգետիկ ճգնաժամն իրենց խիստ զգալի ազդեցությունն ունեցան ինչպես ամբողջ երկրի, այնպես էլ Վանաձորի վրա: Մեծ վնաս կրեց քաղաքի բնությունը. էներգետիկ ճգնաժամի հետևանքով հատվեցին շրջակա անտառները, ինչը խորապես բացասական ազդեցություն ունեցավ նաև կենդանական աշխարհի վրա:

Խորհրդային համակարգի փլուզումից հետո անկախ Հայաստանում նոր ձևավորված կառավարման համակարգերը շարունակում էին հենվել խորհրդային մոդելի վրա, ինչը չէր նպաստում բնապահպանական խնդիրների լուծմանը: Աղբահանության ոլորտը դրանցից մեկն է: Ժամանակները փոխվել են, խնդիրներն ու մարտահրավերները նոր մոտեցումներ են պահանջում, սակայն Հայաստանի համայնքների մեծ մասում, այդ թվում՝ Վանաձորում, թեև գիտակցում են բարեփոխումների անհրաժեշտությունը, սակայն դրանք իրականացնելու համար ունեն անհրաժեշտ նյութական ռեսուրսների և առաջադեմ փորձի պակաս:

Այս առումով ողջունելի է ԵՄ աջակցությամբ «Դաշինք՝ հանուն կայուն և կանաչ կառավարման» ծրագրի շրջանակում փորձագիտական թիմի կողմից, համայնքապետարանի աշխատակիցների և ծրագրային թիմի աջակցությամբ Վանաձոր համայնքի աղբահանության կառավարման ռազմավարական պլանի մշակումը, որը կարևոր քայլ է հիմնարար բարեփոխումների համար՝ հատկապես հաշվի առնելով այն հանգամանքը, որ աղբահանության ներկա վիճակում ունենք բնապահպանական խնդիրներ, թափոնների կառավարման մինչ օրս ունեցած փորձը ևս բավարար չէ գլոբալ փոփոխությունների համար:

Վանաձոր խոշորացված համայնքը կարիք ունի առանձնահատուկ մոտեցման և և հաջողված փորձի տեղայնացման, ինչի շնորհիվ կձևավորվի աղբահանության նոր մշակույթ և կորդեգրվի ոլորտի կառավարման նոր մոդել: Լիահույս եմ, որ Ծրագիրը կնպաստի մեր քաղաքի բնապահպանական խնդիրների լիարժեք լուծմանը, ինչն իր հերթին կխթանի նաև կանաչ քաղաքի առողջարանային և զբոսաշրջային երբեմնի համբավի վերականգնմանն ու համայնքի զարգացմանը:

Հարգանքով՝

Արկադի Փելեշյան

Վանաձոր համայնքի ղեկավարի պաշտոնակատար

Ներածություն.

ԳԼԽԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

- Վանաձոր քաղաք. համառոտ ակնարկ
- ԿԿԹ կառավարման քաղաքականությունները. միջազգային պարտավորություններ, ազգային գերակայություններ և առկա ռազմավարություն
- Ազգային օրենսդրություն և ԿԿԹ տեղական կառավարման պլանավորմանը ներկայացվող պահանջներ
- Ինստիտուցիոնալ կառուցակարգ. ազգային, տարածքային և տեղական կառավարման մարմինների դերը
- Տեղական կարգավորումներ
- Տեղական ԿԿԹ կառավարման կարևորությունն ու մարտահրավերները
- Պլանավորման գործընթացը և հանրային մասնակցության դերը
- Տեղական ԿԿԹ կառավարման պլանի կառուցվածք
- Տեղական ԿԿԹ կառավարման պլանի իրագործման հաշվետվություն
- Տվյալների հավաքման պահանջներ և ստանդարտներ

Վանաձոր. համառոտ ակնարկ

Լոռու մարզկենտրոն Վանաձորը գտնվում է Հայաստանի հյուսիսային մասում՝ Փամբակի և Բազումի լեռների հովտում: Հեռավորությունը Երևանից ավտոմոբիլային ճանապարհով 125կմ է, երկաթգծով՝ 224կմ: Ծովի մակերևույթից բարձր է 1353մ: Քաղաքի միջով հոսում են Փամբակ, Տանձուտ և Վանաձոր գետերը:

Վարչատարածքային բարեփոխումների արդյունքում Վանաձորը համայնքը դարձել է բազմաբնակավայր համայնք. որի կազմում են Վանաձոր, Գուգարք, Շահումյան և Դարպաս բնակավայրերը՝ ընդհանուր մոտ 90,000 բնակչությամբ:

Ամենամեծ բնակավայրը Վանաձոր քաղաքն է, որը զբաղեցնում է 2599,33 հեկտար տարածք: Քաղաքի բնակչությունը կազմում է 82,800մարդ, իսկ փաստացի բնակչության թիվը՝ 77,600 մարդ է՝ 34,828 ընտանիք /2019թ/:

Վանաձոր քաղաքում հունվարին օդի միջին ջերմաստիճանը – 4.2°C է, իսկ հուլիսին, միջին ամսական ջերմաստիճանը՝ +19.7°C:

Վանաձորի տեղում եղած քաղաքի պատմությունը սկսվում է հազարամյակների խորքի: Հնագետների պեղումներն ապացուցել են, որ Տաշիր-Ձորագետի շրջանը և հատկապես Վանաձոր քաղաքի տարածքը հարուստ են տարբեր հնագիտական հուշարձաններով:

13 դ. ենթադրվում է, որ քաղաքը ստացել է Ղարաքիլիսա (Սև եկեղեցի) անունը թաթարներից: 1801թ. Այն Լոռու հետ անցնում է Ռուսաստանին:

Ռուսաստանին միացնալուց հետո Ղարաքիլիսայում բնակություն են հաստատել Արևմտյան Հայաստանի Կարս, Արդահան, Բայազետ, Էրզրում քաղաքներից գաղթած մի քանի հարյուր հայ ընտանիք: 1924 փքաղաքային է: Մինչև 1935 թվականը կոչվել է Ղարաքիլիսա, իսկ այնուհետև՝ Կիրովական: 1939 թ գլխավոր հատակագծով (ճարտարապետներ՝ Ն. Ջարգարյան, Ա. Մինասյան) որոշակի է դարձել քաղաքի կերպարը՝ զարգացման նշանակալից հեռանկարներով (արդյունաբերական կենտրոն և ամառանոցային վայր):

1992 թվականից քաղաքը կոչվում է Վանաձոր: Այժմ Վանաձորը Հայաստանի Հանրապետության երրորդ քաղաքն է (82 800 բնակչություն), Լոռու մարզի վարչական, տնտեսական-մշակութային կենտրոնը: Քաղաքում գործում է 4 պետական բուհ, 10-ը մարզադպրոց, ընդհանուր առմամբ 19 մշակութային հիմնարկ՝ երաժշտական դպրոցներ, արվեստի դպրոցներ, երգչախմբեր, մշակույթի տներ, թատրոններ և այլն:

ԿԿԹ կառավարման քաղաքականությունները, միջազգային պարտավորություններ, ազգային գերակայություններ և առկա ռազմավարություն (մանրամասները՝ Հավելված Բ-ում)

2020 թ. -ի սեպտեմբերի 21-ին ՀՀ կառավարության կողմից ներկայացված Հայաստանի ռազմավարական զարգացման շրջանակը՝ «Հայաստանի փոխակերպման ռազմավարություն 2050»-ը, սահմանում է մեզանպատակներ,¹ որոնցից մի քանիսն ուղիղ առնչություն ունեն թափոնների կառավարման հետ: Ընտրված մեզանպատակներն են՝

1. ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՀՈՂԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ
2. ՎԵՐԱԿԱՆԳՆՎՈՂ ԵՎ ՄԱՏՉԵԼԻ ԷՆԵՐԳԻԱ
3. ԲԻՉՆԵՍԻ ՀԱՄԱՐ ԳՐԱՎԻՉ ՀԱՅԱՍՏԱՆ
4. ՄԱՔՈՒՐ ԵՎ ԿԱՆԱՉ ՀԱՅԱՍՏԱՆ:

2015 թ.-ին Հայաստանը նախաձեռնեց ազգայնացման և իրականացման մասնակցային գործընթաց կայուն զարգացման նպատակների համար (ԿԶՆ-ներ),² որոնցից մի քանիսն ուղղակիորեն կամ անուղղակիորեն ներառում են թափոնների կառավարմանն առնչվող հարցեր:

Թափոնների կառավարմանն առնչվող հարցերը նաև արտացոլված են առանցքային ազգային ռազմավարություններում և միջազգային համաձայնագրերում, ինչպիսիք են, օրինակ, ՀՀ կառավարության 2019-2023 թթ-ի ծրագիրը [iv], ՀՀ 2017-2036 թթ. կոչո թափոնների կառավարման համակարգի զարգացման ռազմավարությունը [iv], Մաքուր արտադրության հայեցակարգը [iv], ՀՀ և ԵՄ միջև ստորագրված համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագիրը (ՀԸԳՀ) [vi]:

ՀՀ սահմանադրություն և թափոններին վերաբերող միջազգային համաձայնագրեր
Հայաստանի Հանրապետության սահմանադրության 10-րդ և 12-րդ հոդվածներում սահմանվում են բնական ռեսուրսների օգտագործման պայմանները:

Հայաստանը թափոնների կառավարմանն առնչվող 10 միջազգային համաձայնագրերի կողմ է: Տես, Հավելված Բ. Աղյուսակ 1 - Հայաստանի մասնակցությունը թափոնների կառավարմանն առնչվող միջազգային համաձայնագրերին: Աղյուսակ 2 - Հայաստանի կողմից ստորագրված բնապահպանությանն առնչվող միջպետական համաձայնագրեր:

¹ Այս խնդրի վերաբերյալ մանրամասն տվյալները հասանելի են հետևյալ կայքէջում՝ <https://www.gov.am/en/news/item/9554/>:

² ԿԶՆ-ների իրագործման վերաբերյալ մանրամասները հասանելի են հետևյալ (անգլերեն) զեկույցում՝ “SDG Implementation Voluntary National Review (VNR) Armenia”, https://sustainabledevelopment.un.org/content/documents/19586Armenia_VNR_2018.pdf:

ՀՀ կառավարության 2019-2023 թվականների ծրագիր

2019 թ.-ի փետրվարին հրապարակված կառավարության ծրագրով սահմանվում են երկրի բնապահպանական կառավարման ընդհանուր ուղղությունները՝ հատկապես կենտրոնանալով քիմիական նյութերի և թափոնների (ներառյալ հանքարդյունաբերական թափոնների)՝ բնապահպանական առումով արդյունավետ կառավարման վրա: Քաղաքացիների համար հարմար և էկոլոգիապես անվտանգ կենսապայմաններ ապահովելու և շրջակա միջավայրի ու հանրային առողջության վրա կոշտ կենցաղային թափոնների բացասական (վտանգավոր) ազդեցությունները նվազեցնելու նպատակով ծրագիրը նախատեսում է հետևյալը՝

- միջազգային ստանդարտներին համապատասխանող թափոնների կառավարման համակարգ հիմնելու ինստիտուցիոնալ շրջանակ,
- թափոնների կառավարման ծախսերի վերականգնում՝ թափոնների բարելավված հավաքման վճարի և ոլորտում ավելի արդյունավետ պայմանագրերի կնքման և իրավական շրջանակի միջոցով,
- թափոնների հեռացման և վերամշակման ծրագրերի իրականացում միջազգային հաստատությունների հետ համագործակցությամբ:

ՀՀ կառավարության ծրագրի կիրարկումն ապահովելու նպատակով ՀՀ կառավարության 16.05.2019 թ.-ի թիվ 650-Լ որոշմամբ հաստատվել է Կառավարության 2019-2023 թվականների գործունեության միջոցառումների ծրագիրը: Հավելված Բ-ի Աղյուսակ 3-ում ներկայացված է կոշտ կենցաղային թափոնների կառավարման հիմնական ուղղություններին ծրագրով (N-65Ա) սահմանված աջակցող գործողությունների ամփոփ նկարագրությունը:

Արտադրատեսակների համար արտադրողի (ներմուծողի) պատասխանատվության ընդլայնման (ԱՊԸ) համակարգերի ներդրման ռազմավարություն

2018 թ. -ի ապրիլի 12-ին ՀՀ կառավարությունն ընդունել է «Արտադրատեսակների համար արտադրողի (ներմուծողի) պատասխանատվության ընդլայնման համակարգերի ներդրման ռազմավարությանը և դրանից բխող 2018-2021 թվականների միջոցառումների ծրագրին հավանություն տալու մասին» արձանագրային որոշումը: ԱՊԸ հիմքում ընկած ռազմավարության համաձայն՝ արտադրողը կամ ներմուծողը, տվյալ առարկայի արտադրության (ներմուծման) սկզբնական փուլում նախատեսում է այդ արտադրատեսակի (ապրանքի) օգտագործման վերջնական փուլում առաջացող բնապահպանական ազդեցությունները կանխարգելող (կամ բացասական ազդեցությունները չեզոքացնող) միջոցառումներ ու կրում է վարչական և ֆինանսական պատասխանատվություն նշված բացասական ազդեցությունների վերացման համար: ԱՊԸ համակարգի նպատակները հետևյալն են.

1. թափոնների արտադրության կանխարգելում,
2. թափոնների քանակի նվազեցում դրանց գոյացման սկզբնաղբյուրում,
3. վերամշակում՝ որպես երկրորդային հումքային նյութեր,
4. վերամշակում՝ որպես երկրորդային էներգետիկ ռեսուրս,
5. թափոնների թաղում աղբավայրերում (թափոնների կառավարման ամենաքիչ նախընտրելի մեթոդ):

ԱՊԸ համակարգի ներդրման հիմնական երկարաժամկետ նպատակը բնապահպանական պահանջները բավարարող արտադրության խթանումն է, ինչը կօգնի կանխելու շրջակա միջավայրի աղտոտումը և նվազեցնելու բնական ռեսուրսների գործածությունը արտադրության բոլոր ցիկլերում, ինչպես նաև կրճատելու թափոնների վերամշակման ծախսերը:

Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագիր (ՀԸԳՀ)

Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագիրը ՀՀ և ԵՄ միջև ստորագրվել է 2017 թ. -ի նոյեմբերի 24-ին:³

Ստորև ներկայացված են ՀԸԳՀ շրջանակում թափոնների կառավարման վերաբերյալ Հայաստանի ստանձնած պարտավորությունները, որոնք բերված են որպես թիրախներ՝ ենթակա իրականացման սահմանված ժամանակահատվածում.

- մինչև 2020 թ. -ը ունենալ հանրությանը բնապահպանական տեղեկություններ տրամադրող համակարգ,
- մինչև 2021 թ. -ը մշակել աղբավայրերում տեղադրվող կենսաքայքայվող կենցաղային թափոնների քանակի կրճատման ազգային ռազմավարություն,
- մինչև 2021 թ. -ը սահմանել վերահսկողության և մշտադիտարկման ընթացակարգեր՝ աղբավայրերի շահագործման, փակման և հետագա խնամքի փուլերում,
- մինչև 2021 թ. -ը սահմանել դիմումների և թույլտվությունների համակարգ և թափոնների ընդունման (աղբավայրերում) ընթացակարգեր,
- մինչև 2022 թ. -ը մշակել թափոնների կառավարման պլաններ՝ թափոնների հիերարխիայի հինգ քայլերի և թափոնների կանխարգելման ծրագրերի համաձայն,
- մինչև 2023 թ. -ը սահմանել թափոնների հավաքում և փոխադրում իրականացնողների և գործողությունների ռեեստր,
- մինչև 2024 թ. -ը սահմանել ամբողջական ինքնաձախսաձածկման մեխանիզմ՝ համաձայն «աղտոտողը վճարում է» և «արտադրողի ընդլայնված պատասխանատվություն» սկզբունքների,
- մինչև 2024 թ. -ը սահմանել գոյություն ունեցող աղբավայրերի բարելավման պլաններ,
- մինչև 2024 թ. -ն ունենալ սահմանված համակարգ, որն ապահովում է համապատասխան թափոնի մշակումը՝ նախքան դրա տեղադրումն աղբավայրում,
- մինչև 2025 թ. -ը օպերատորների համար սահմանել պարտավորություններ՝ ձեռնարկելու անհրաժեշտ կանխարգելման և վերականգնման միջոցառումներ, ներառյալ պատասխանատվություն ծախսերի համար,
- մինչև 2025 թ. -ը խիստ պատասխանատվություն սահմանել վտանգավոր աշխատանքային գործողությունների համար:

Ազգային օրենսդրություն և ԿԿԹ կառավարման տեղական պլանավորմանը ներկայացվող պահանջներ

Թափոնների վերաբերյալ ՀՀ օրենսդրությունը ներառում է տասնյակ օրենքներ⁴ և թափոնների կառավարմանն առնչվող ենթաօրենսդրական ակտեր: Հայաստանը ստորագրել է թափոններին առնչվող ավելի քան 10 միջազգային պայմանագիր և համաձայնագիր: Հավելված Բ-ում բերված **Ошибки!**

Источник ссылки не найден.-ը ներկայացնում է ՀՀ օրենսդրական դաշտի ընդհանուր կառուցվածքը:

³ Ժամանակացույցին առնչվող հավելվածը մտնում է ուժի մեջ է մտնում ՀԸԳՀ-ի ստորագրման պահից՝ 2017 թ-2017թ. -ի նոյեմբերի 24-ից և հասանելի է հետևյալ հղումով՝ https://eur-lex.europa.eu/resource.html?uri=cellar:60b9829d-a1f1-11e7-a56f-01aa75ed71a1.0015.02/DOC_2&format=PDF:

⁴ Հայաստանում թափոնների կառավարմանն առնչվող օրենսդրական ակտերի թարմացված ցանկը հասանելի է ՀԱՀ Յակոբեան բնապահպանական կենտրոնի թափոնների ռեսուրսների շտեմարանում (<https://wri-ace.az.am/hy/legislation>):

Աղբահանության համակարգի 2021-2023 թթ. Ռազմավարությունը

ՀՀ կառավարության 2021 թ. ապրիլի 1-ի N 464 - Լ որոշման համաձայն հաստատվել է Հայաստանում աղբահանության համակարգի ռազմավարությունը և ռազմավարության կիրարկումն ապահովող 2021-2023 թվականների միջոցառումների ծրագիրը:⁵ Ռազմավարությունը սահմանում է աղբահանության կայուն համակարգի զարգացման ստորև ներկայացված գերակայություններն ու ուղղությունները:

ԿԿԹ կառավարման տեղական պլանավորմանը ներկայացվող պահանջներ

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2015 թ. դեկտեմբերի 6-ի փոփոխություններով) 9-րդ գլուխը նվիրված է տեղական ինքնակառավարմանը, որի 179-րդ հոդվածի 2-րդ կետը, սահմանում է, որ «Տեղական ինքնակառավարումն իրականացվում է համայնքներում և որ տեղական ինքնակառավարումը տեղական ինքնակառավարման մարմինների իրավունքն ու կարողությունն է՝ համայնքի բնակիչների շահերից ելնելով, Սահմանադրությանը և օրենքների համապատասխան, սեփական պատասխանատվությամբ լուծելու համայնքային նշանակության հանրային հարցերը»:

Սկզբունքորեն ՏԻՄ մարմիններն իրավունք ունեն անելու այն, ինչ բխում է իրենց համայնքի բնակիչների շահերից և արգելված չէ օրենքով: «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝

- համայնքի պարտադիր խնդիրներից են «... համայնքի աղբահանությունը և սանիտարական մաքրումը, կոմունալ տնտեսության աշխատանքների ապահովումը...»
- համայնքի ավագանին «...իրականացնում է «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված լիազորություններ»:
- համայնքի ղեկավարը «...կազմակերպում է աղբահանությունը և սանիտարական մաքրումը, ինչպես նաև իրականացնում է «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված այլ լիազորություններ»:

ԿԿԹ կառավարման տեղական պլանի մշակմանը ներկայացվող առանձին իմպերատիվ իրավական պահանջներ ամրագրված չեն ՀՀ օրենսդրությամբ, այդ իսկ պատճառով համայնքները հիմնականում չունեն աղբի/աղբահանության կառավարման ռազմավարական պլաններ: Չնայած դրանց մշակման և համայնքի ավագանու կողմից ընդունման մի քանի հաջողված փորձեր եղել են միջազգային կազմակերպությունների դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում, այնուամենայնիվ, դրանք մնացել են թղթի վրա և գրեթե չեն կիրառվում:

Անգամ ներկա իրավակարգավորումներով՝ համայնքներն իրավունք ունեն և կարող են ունենալ ԿԿԹ կառավարման տեղական ռազմավարական պլաններ, սակայն առաջնորդվում են այն սկզբունքով, որ չկա դրանք ունենալու իմպերատիվ պահանջ, և ինքնակամ չեն ձեռնարկում կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ ռազմավարական պլանավորում իրականացնելու քայլեր:

Ինստիտուցիոնալ կառուցակարգ, ազգային, տարածքային և տեղական կառավարման մարմինների դերը

Թափոնների կառավարման և աղբահանության ոլորտը կարգավորող ՀՀ գործող օրենսդրությունը խիստ կարիք ունի վերանայման. մասնավորապես պետք է հստակեցնել բոլոր սուբյեկտների լիազորությունների

⁵ Որոշումը, ռազմավարությունը և դրա կիրարկումն ապահովող միջոցառումների ծրագիրը հասանելի է հետևյալ հղումով՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=151384>

իրավական սահմանները՝ հիմք ընդունելով ԵՄ լավագույն փորձը և ՀՀ միջազգային պայմանագրերով ստանձնած պարտավորություններից բխող պահանջները:

Իրականում «Թափոնների մասին» և «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» երկու առանձին օրենքներում ոլորտի հասկացություններ սահմանելը և համանման հարաբերություններ կարգավորելը իրավական անհստակություն է ստեղծում, որը դժվարացնում է իրավական նորմերի պատշաճ կիրառումն ու պաշտպանությունը:

Տեղական կարգավորումներ

Ոլորտի կարգավորման ներկա ժամանակաշրջանի⁶ խնդրահարույց հարցերից մեկն այն է, որ հստակ սահմանված չէ աղբահանության ծառայության նկարագրությունը և հիմնավորված կամ տարբերակված չէ դրան համապատասխան վճարվելիք տեղական վճարի չափը (սահմանված գինը)՝ ըստ մատուցվող ծառայության տեսակի և որակի:

Համայնքներում չեն տարանջատվում աղբահանության և սանիտարական մաքրման տարածքներն ու ծառայության շրջանակը, հետևաբար դժվար է տարանջատել համայնքային բյուջեի ծախսերն ըստ այդ ծառայությունների, հատկապես այն դեպքերում, երբ աղբահանության ծառայությունն իրականացվում է ՀՈԱԿ-ների կողմից:

«Տեղական ինքնակառավարման մասին» օրենքով պահանջվում է, որ համայնքի ավագանին հաստատի համայնքի սանիտարական մաքրման սխեման, սակայն իրավական տեսանկյունից ճիշտ կլինի սահմանել, որ համայնքի ավագանին պարտավոր է հաստատել աղբահանության կառավարման ռազմավարական պլանը, որի անբաժանելի մասը կլինի սանիտարական մաքրման սխեման:⁷

ԿԿԹ տեղական կառավարման պլանավորման կարևորությունը

ԿԿԹ կառավարման ազգային ռազմավարության նպատակների իրականացումը մեծապես կախված է տեղական մակարդակում թափոնների կառավարումից: Օրինակ՝ աղբավայր հեռացվող թափոնների քանակի կրճատման կամ օգտահանվող թափոնների քանակի ավելացման ազգային թիրախներին հասնելը կախված է տեղական մակարդակում տեսակավորված հավաքման պլանավորումից և դրա իրականացումից: Վերջինս հաճախ բախվում է մի շարք խնդիրների: Հայտնի է, որ տեսակավորված հավաքման արդյունավետությունն ուղղակիորեն կապված է բնակչության վարքագծից, ուստի պլանավորման անբաժանելի մաս պետք է կազմեն իրազեկության բարձրացման ծրագրերը և ՏԻՄ-երի կողմից համայնքի հետ տարվող այլ աշխատանքներ: ԿԿԹ տեղական կառավարման այլ մարտահրավերներից է ճշգրիտ տվյալներ հավաքելը, որը կարևոր դեր ունի պլանավորման գործում, ուստի և ՏԻՄ-երը պետք է պլանավորման մեջ ներառեն նաև անհրաժեշտ տվյալների հավաքման մեխանիզմների կիրառումը:

⁶ Իրավական կարգավորումները վերլուծված են 2021 թվականի մարտի դրությամբ:

Պլանավորման գործընթացում հանրային մասնակցությունը

ԿԿԹ տեղական կառավարումը պատշաճ պլանավորելու համար համայնքն ապահովել է բնակչության և այլ շահառուների մասնակցությունը:

ԵՄ 2001/42/EC դիրեկտիվի⁸ համաձայն՝ հանրության ներգրավումը պարտադիր պահանջ է բնապահպանական ռազմավարական գնահատման համար, որի մեջ մտնում է նաև թափոնների կառավարումը: Այն համահունչ է նաև Օրիուսի կոնվենցիային,⁹ որի պահանջներից է համայնքի բնակչությանը և հասարակական կազմակերպությունների սեկտորին աստիճանաբար մասնակից դարձնել շրջակա միջավայրի պահպանությանն ուղղված համայնքային նշանակության իրավական ակտերի մշակման գործընթացին:

Տվյալների հավաքագրման պահանջներ և ստանդարտներ

Արդյունավետ ռազմավարական պլանավորումը գրեթե անհնար է առանց հավաստի տվյալների առկայության, ուստի դրանց հավաքումը պլանավորման անբաժանելի մասն է: Որքան շատ և որքան հավաստի ու ճշգրիտ են մուտքագրվող տվյալները, այնքան ավելի ամփոփ և լիարժեք է հնարավոր նկարագրել և գնահատել առկա իրավիճակը, որը, ինչպես նշվել է, ԿԿԹ տեղական կառավարման պլանի երկու հիմնական բաղադրիչներից է: Հավաստի ու ճշգրիտ տվյալներ հավաքելն ամենևին հեշտ աշխատանք չէ, հատկապես երբ դա արվում է առաջին անգամ: Կարևոր է ստեղծել տվյալների հավաքի՝ արդյունավետ, հարատև ու կայուն մեխանիզմներ թե՛ ազգային, թե՛ համայնքային մակարդակով:

Պլանավորման համար թերևս ամենակարևոր տվյալներից մեկն է համայնքում գոյացող թափոնների քանակը՝ արտահայտված ըստ համայնքի (մարզի կամ երկրի) կամ մեկ շնչի՝ միավոր ժամանակահատվածում առաջացրած թափոնների զանգվածով: Օրինակ՝ Երևան քաղաքում 2019 թվականին գոյացել է մոտ 330 հազար տոննա կոշտ կենցաղային թափոն: Մեկ շնչի հաշվով ԿԿԹ գոյացման ցուցանիշը նույն տարվա համար կարտահայտվի որպես 325 կգ/տարի կամ 0.9 կգ/օր: Այս ցուցանիշները ճշգրիտ հաշվարկելու համար անհրաժեշտ են կայուն մեխանիզմներ, մասնավորապես՝ համայնքում աղբահավաք ընկերություններին հասանելի թափոնների կշռման ենթակառուցվածք ինչպես համայնքային աղբավայրում, այնպես էլ տեսակավորման կամ օգտահանման կայանքներում, եթե առկա են: Հակառակ դեպքում, այդ ցուցանիշը կլինի միայն մոտարկման արդյունք, որը պիտանի չի լինի, օրինակ, 3 տարվա կտվածքով համայնքում թափոնների գոյացման փոփոխությունները արձանագրելու համար:

Համայնքային աղբավայրերում տեղադրվող թափոնների քանակը մեկ այլ կարևոր ցուցանիշ է, որի մասին հավաստի և ճշգրիտ տվյալների հավաքն, ինչպես նշվեց, հնարավոր է միայն աղբավայրերում անցակետերի, կշեռքների և տարրական վերահսկողության առկայության պարագայում: Ճիշտ է՝ այլընտրանքային աղբյուր կարող է լինել համայնքից հավաքված թափոնները աղբավայր հեռացնող աղբատարների թիվը, սակայն ակնհայտ է, որ այդ դեպքում տվյալները ճշգրիտ չեն լինի, քանի որ քաշը հաշվարկվելու է ըստ աղբատարի ծավալի՝ ընդունված խտության գործակցով (օր. 0.5 տ/մ³), որը գրեթե միշտ տարբեր է: Վերջին դեպքում նաև հաշվի չեն առնվի խնդրո առարկա աղբավայրում անվերահսկելի ձևով տեղադրվող աղբի քանակները:

⁸ Դիրեկտիվը հասանելի է հետևյալ հղումով՝ <https://eur-lex.europa.eu/eli/dir/2001/42/oj>

⁹ Օրիուսի կոնվենցիան հասանելի է հետևյալ հղումով՝ <https://ec.europa.eu/environment/aarhus/>

Մեկ այլ առանցքային ցուցանիշ է համայնքում գոյացող աղբի բաղադրությունը, որի ճշգրիտ գնահատումը հնարավոր է միայն հստակ մեթոդաբանությամբ և պարբերականությամբ արվող նմուշառման և վերլուծության պարագայում:

2000 թ.-ից Հայաստանում իրականացված ութ ծրագրերը ներառել են թափոնների քանակի և բաղադրության վերլուծություն՝ որպես ծրագրի մաս կամ դրա հիմնական նպատակ: Դրանք բոլորն իրականացվել են տարբեր մեթոդաբանությունների կիրառմամբ, երկրի տարբեր հատվածներում և տարբեր սեզոնների ընթացքում, ուստի և արդյունքները միմյանց հետ համադրելի չեն:¹⁰

Ամենավերջին վերլուծությունն իրականացվել է 2019 թ.-ի ամռանը Հայաստանի ամերիկյան համալսարանի (ՀԱՀ) Յակոբեան բնապահպանական կենտրոնի կողմից Հայաստանի կառավարության հետ համագործակցությամբ՝ «Թափոնների քանակի և բաղադրության ուսումնասիրություն» ծրագրի շրջանակում: Կոշտ կենցաղային թափոնների փորձանմուշներ են վերցվել 6 համայնքներում (Երևան, Արարատ, Կապան, Հրազդան, Գյումրի և Վանաձոր)՝ նպատակ ունենալով ձեռք բերելու ներկայացուցչական ընտրանք ողջ երկրի համար: Թեստերի իրականացման համար կիրառվել է ԵՄ-ում օգտագործվող (մասնավորապես Շվեդիայում) մեթոդաբանություն, որը հարմարեցվել է հայկական համատեքստին:¹¹

ԿԿԹ տեղական կառավարման պլանի կառուցվածք

Միջազգային պրակտիկայի ուսումնասիրությունը վկայում է, որ ԿԿԹ կառավարման պլաններն ունենում են հիմնականում միանման կառուցվածք, որը կարող է տարբերվել մասնավոր ենթաբաժինների կազմակերպման մակարդակում: Սույն ԿԿԹ տեղական կառավարման պլանի կառուցվածքը մշակվել է հիմք ընդունելով Եվրոպայի խորհրդի բնապահպանական կոմիտեի կողմից մշակված ԿԿԹ (ազգային) պլանավորման ուղեցույցը:¹² Տեղական պլանավորումը, ինչպես և ազգայինը, ենթադրում է երկու հիմնական մաս՝ առկա իրավիճակի գնահատում և հետագա պլանավորում: Ուստի և առաջարկվող ԿԿԹ տեղական կառավարման պլանը բաղկացած է համապատասխան երկու գլուխներից իրենց բաժիններով: ԿԿԹ տեղական կառավարման պլանը ունի հետևյալ կառուցվածքը.

¹⁰ ՀԱՀ Յակոբեան բնապահպանական կենտրոն (2020). ԹԱՓՈՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ. Հայաստանի ամերիկյան համալսարան և «LIFE» հիմնադրամ: Ծրագրի կայքէջ՝ <https://ace.aua.am/hy/waste/governance/>:

¹¹ Հայաստանի Հանրապետության թափոնների քանակի և բաղադրության վերլուծություն, Երևան. ՀԱՀ Յակոբեան բնապահպանական կենտրոն և ՀԱՀ «Մանուկյան Սիմոն» հետազոտական հիմնադրամ, «LL Bolagen», (2020): Ծրագրի կայքէջ՝ <https://ace.aua.am/hy/waste/composition/>:

¹² Preparing a Waste Management Plan: A methodological guidance note, 2012. Հասանելի է անգլերեն՝ լեզվով հետևյալ կայքէջում՝ <https://ec.europa.eu/environment/waste/plans/index.htm>:

ԱՌԿԱ ԻՐԱՎԻՃԱԿԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

- 1.1. Ներածություն (պլանի ամփոփագիր)
- 1.2. Հիմնախնդիրներ, առաջնահերթություններ, տեսլական
- 1.3. Պլանավորման տարածքի բնութագիր
- 1.4. Թափոնների քանակ ու բաղադրություն
- 1.5. Թափոնների գործածություն
- 1.6. Իրազեկության առկա մակարդակ
- 1.7. Ֆինանսավորում և բյուջե
- 1.8. Նախկինում սահմանված նպատակների մշտադիտարկում և գնահատում

2. ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ

- 2.1. Կանխատեսումներ
- 2.2. Կանխադրոյթներ
- 2.3. Տեսլականի, նպատակների և թիրախների սահմանում (կարճաժամկետ և միջնաժամկետ)
- 2.4. Գործողությունների պլան
- 2.5. Երկարաժամկետ զարգացում
- 2.6. Պլանավորված գործողությունների իրագործման համար պահանջվող բյուջե և ֆինանսավորում
- 2.7. Թափոնների կառավարման բյուջետավորում

ԿԿԹ տեղական կառավարման պլանի իրագործման հաշվետվություն և մշտադիտարկում

Ցանկացած ռազմավարական պլանավորում և դրանից բխող գործողությունների իրագործում պետք է գնահատվի՝ ըստ արդյունքների: Դա արվում է ընթացիկ պլանում սահմանված թիրախների և նպատակների իրագործումը սահմանված ցուցանիշների համաձայն գնահատելու միջոցով: Այնուհետև իրականացվում է խոչընդոտների և խնդիրների վերլուծություն, որի արդյունքում պլանում փոփոխություններ անելու անհրաժեշտություն կարող է առաջանալ՝ թիրախներին ավելի արդյունավետ ձևով հասնելու նպատակով:

ՏԻՄ-երի կողմից մշակված ԿԿԹ տեղական կառավարման պլանի իրագործումը ենթադրում է լիազոր մարմինների կողմից մշտադիտարկում, որը պետք է իրականացվի հաշվետվությունների միջոցով:

Հաջորդ երկու գլուխներում քայլ առ քայլ ներկայացվում են Վանաձորի կոշտ կենցաղային թափոնների ռազմավարական պլանը:

1 ԱՌԿԱ ԻՐԱՎԻՃԱԿԻ ԳՆԱՆԱՏՈՒՄ



1 ԱՌԿԱ ԻՐԱՎԻՃԱԿԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

- 1.1 Ներածություն (պլանի ամփոփագիր)
- 1.2 Հիմնախնդիրներ, առաջնահերթություններ, տեսլական
- 1.3 Պլանավորման տարածքի բնութագիր
- 1.4 Թափոնների քանակ և բաղադրություն
- 1.5 Թափոնների գործածություն
- 1.6 Իրազեկության առկա մակարդակ
- 1.7 Ֆինանսավորում և բյուջե
- 1.8 Նախկինում սահմանված նպատակների մշտադիտարկում և գնահատում

Պլանի անվանում	ՎԱՆԱՁՈՐԻ ՔԱՂԱՔԻ ԿՈՇՏ ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ԹԱՓՈՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ 2022-2026 թթ.-ի ՊԼԱՆ
Պլանավորման մեջ ընդգրկված համայնք(ներ)	Վանաձոր
Պլանավորման ժամանակաշրջան	2023-2027 թթ.
Ներկայացվող պլանի նախատեսված վերանայման ամսաթվերը	2024 թ. սեպտեմբեր 2025 թ. սեպտեմբեր
Պլանը կազմող անձանց անուն, ազգսանուն, պաշտոն	Արմեն Վարոսյան, «Դաշինք» հանուն կայուն և կանաչ կառավարման» ծրագրի՝ աղբահանության կառավարման գծով փորձագետ Աջակցությամբ՝ Նատալյա Լափաուրի, «Դաշինք» հանուն կայուն և կանաչ կառավարման» ծրագրի ղեկավար Բենիկ Նազարյան, կոմունալ տնտեսության, բարեկարգման և շրջակա միջավայրի պահպանության բաժնի պետի ժ/պ Վանաձորի համայնքապետարան Արմինե Փանոյան, «Դաշինք» հանուն կայուն և կանաչ կառավարման» ծրագրի՝ Աղբահանության ռազմավարության մշակման առաջադրանքի համակարգող
Պլանը կազմող անձանց էլ. հասցե	ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22
Պլանի էլեկտրոնային տարբերակը ներբեռնելու էլ. հասցե	https://vanadzor.am/

1.1 Ներածություն (պլանի ամփոփագիր)

Գործընթաց և մեթոդաբանություն

Վանաձոր քաղաքի աղբահանության ռազմավարական պլանը մշակվել է ԵՄ ֆինանսավորմամբ և Վանաձորի և Գյումրիի համայնքապետարանների համաֆինանսավորմամբ իրականացվող «Դաշինք՝ հանուն կայուն և կանաչ կառավարման» ծրագրի շրջանակում:

Պլանի մշակումն իրականացվել է Վանաձորի համայնքապետարանի աշխատանքային խմբի և ծրագրային թիմի աջակցությամբ, մի շարք հանդիպումների արդյունքում: Ստորև աղյուսակում ներկայացված են այդ հանդիպումների թեմաները:

N/N	Հանդիպումների ցանկ	Մասնակիցներ
1.	Իրավական և քաղաքականության հարցերով ծրագրի աշխատանքային խմբի մեկնարկային հանդիպում՝ ռազմավարական պլանավորման քայլերը նախանշելու նպատակով: Աղբահանության հարցերով աշխատանքային խմբի ստեղծում	Իրավական և քաղաքականության հարցերով ծրագրի աշխատանքային խումբ
2.	Աղբահանության հարցերով աշխատանքային խմբի հանդիպում, աղբահանության իրավիճակի ներև խնդիրների ամփոփ ներկայացում:	Աղբահանության հարցերով աշխատանքային խումբ
3.	Աղբահանության ոլորտի հիմնահարցերի մասնակցային վերհանում չորս հիմնական ոլորտներով 1. Համակարգ և օրենսդրություն 2. Աղբի հավաքում և հեռացում 3. Ֆինանսա-տնտեսական գործունեություն 4. Հանրային իրազեկում և մասնակցություն	Աղբահանության հարցերով աշխատանքային խումբ
4.	Աղբահանության ոլորտի հիմնահարցերի առաջնահերթությունների որոշում: Ուժեղ և թույլ կողմերի վերլուծություն	Աղբահանության հարցերով աշխատանքային խումբ
5.	Ռազմավարական պլանի մշակում և ներկայացում աշխատանքային խմբին	Փորձագետներ
6.	Ռազմավարական պլանի ներկայացում. հանրային լսումներ	Աշխատանքային խումբ
7.	Ռազմավարական պլանի ներկայացում համայնքի ավագանուն	Համայնքի ավագանու, աշխատանքային խմբի անդամներ
8.	Ռազմավարական պլանի հաստատում համայնքի ավագանու կողմից	Ավագանու նիստ՝ աշխատանքային խմբի մասնակցությամբ

1.2 Հիմնախնդիրներ, առաջնահերթություններ, տեսլական

Տեսլական և երկարաժամկետ նպատակներ

Վանաձոր քաղաքի աղբահանության կառավարման ուսումնասիրությունների, ինչպես համայնքապետարանի և այլ շահակիր կողմերի հետ հանդիպումների հիման վրա վերլուծվել է աղբահանության ներկա վիճակը, որը փորձում է պատասխանել «որտե՞ղ ենք մենք այժմ» հարցին: Դրանք շարադրվել են ներկայիս իրավիճակի մասին մի շարք տվյալների և աղբահանության ներքին թույլ և ուժեղ կողմերի վերլուծությամբ: Միաժամանակ աշխատանքային խմբի հետ համատեղ որոշվել է աղբահանության տեսլականը և երկարաժամկետ նպատակները «որտե՞ղ ենք մենք ուզում լինել» հարցադրմամբ: Աղբահանության տեսլականը արտահայտում է հավաքական ըմբռնումը այն բանի, թե ապագայում ինչ ցանկալի և իդեալական իրավիճակի պետք է ձգտի հայտնվել աղբահանության կազմակերպումը Վանաձորում: Աղբահանության տեսլականը աշխատանքային խմբի հետ քննարկման արդյունքներով բերվել է հետևյալ ձևակերպմանը:

Աղբահանության արդյունավետ համակարգի ստեղծում՝ հիմնված աղբի կրճատման, վերամշակման և շրջակա միջավայրի պաշտպանությանն ուղղված կայուն գործելակերպի, ֆինանսապես կենսունակ կառավարման և հանրության աջակցության և մասնակցության վրա:

Աղբահանության ոլորտները և ռազմավարական նպատակները

Աշխատանքային խմբի հետ համատեղ խմբավորվել են զարգացման ոլորտները, որոշվել են աղբահանության ռազմավարական ուղղությունները և սահմանվել են երկարաժամկետ նպատակներ: Աղբահանության զարգացումը պահանջում է կոմպլեքս մոտեցում, հետևաբար ռազմավարությունը պետք է հիմնվի տարբեր ոլորտների զարգացման վրա: Այդ ոլորտներն են.

- Ա. Համակարգի զարգացում (կառավարում և կազմակերպչական հարցեր, ներքին օրենսդրություն և կանոնակարգեր)
- Բ. Աղբահանության տեխնիկական միջոցների զարգացում (Աղբի կուտակման, հավաքման, տեղափոխման, տեղակայման, տեսակավորման, վերամշակման/վնասազերծման տեխնիկական հնարավորություններ և ձևեր)
- Գ. Ֆինանսական-տնտեսական արդյունավետություն (ինքնաձախսաձածկման հնարավորություններ և տնտեսական արդյունավետության բարձրացում, աղբահանության վճարների գանձման մեթոդներ, թափոնների տեսակավորման և վերամշակման հնարավորություններ և այլն)
- Դ. Հանրային իրազեկություն և մասնակցություն (երկկողմանի տեղեկատվության կիրառում):

Նշված ուղղություններին համապատասխան ձևակերպվել են 4 երկարաժամկետ նպատակներ՝ հաշվի առնելով Վանաձորի աղբահանության տեսլականը: Ստորև ձևակերպված յուրաքանչյուր նպատակ ենթադրում է Վանաձորի աղբահանությանը վերաբերող առանձին խնդիրների և նրանցով պայմանավորված կոնկրետ ծրագրերի իրականացում:

Ստորև ձևակերպված են այդ 4 նպատակները, որոնք համապատասխանում են վերոնշյալ ոլորտներին.

Ա. Ինստիտուցիոնալ և օրենսդրական զարգացում (կառավարում և կազմակերպչական հարցեր, ներքին օրենսդրություն և կանոնակարգեր):

Նպատակ 1. Բարելավել Վանաձորում աղբահանության կառավարման /համակարգը և ոլորտի ներքին/տեղական օրենսդրությունը:

Բ. Աղբահանության կառավարման ենթակառուցվածք (ԿԿԹ կուտակման, հավաքման, տեղափոխման, տեղակայման, տեսակավորման և վերամշակման/վնասազերծման տեխնիկական հնարավորություններ և ձևեր):

Նպատակ 2. Հզորացնել աղբահանության կառավարման ենթակառուցվածքները Վանաձորի ամբողջ տարածքը սանիտարահիգիենիկ պահանջներին համապատասխան սպասարկելու համար՝ հիմնելով աղբի կրճատման, վերամշակման, վնասագերծման և շրջակա միջավայրի պաշտպանությանն ուղղված մշտական գործընթաց:

Գ. Ֆինանսական-տնտեսական արդյունավետություն:

Նպատակ 3. Հասնել աղբահանության կառավարման ֆինանսական կայունությանը:

Դ. Հանրային իրազեկություն և մասնակցություն:

Նպատակ 4. Ապահովել բնակչության մշտական և հետևողական իրազեկումը և մասնակցությունը աղբահանության կառավարման գործընթացում:

Ստորև բերվում է տեսլականի և նպատակների ամփոփ սխեման.

Վանաձոր քաղաքի աղբահանության ռազմավարության տեսլականը և ռազմավարական նպատակները

Աղբահանության արդյունավետ համակարգի ստեղծում՝ հիմնված աղբի կրճատման, վերամշակման և շրջակա միջավայրի պաշտպանությանն ուղղված կայուն գործելակերպի, ֆինանսապես կենսունակ կառավարման և հանրության աջակցության և մասնակցության վրա

Նպատակ 1. Բարելավել Վանաձորում աղբահանության կառավարման /համակարգը և ոլորտի ներքին/տեղական օրենսդրությունը:

- Խնդիր 1.1
- Խնդիր 1.2
- Խնդիր 1.3
- Խնդիր 1.4

Նպատակ 2. Հզորացնել աղբահանության կառավարման ենթակառուցվածքները Վանաձորի ամբողջ տարածքը սանիտարահիգիենիկ պահանջներին համապատասխան սպասարկելու համար՝ հիմնելով աղբի կրճատման, վերամշակման, վնասագերծման և շրջակա միջավայրի պաշտպանությանն ուղղված մշտական գործընթաց:

- Խնդիր 2.1
- Խնդիր 2.2
- Խնդիր 2.3
- Խնդիր 2.4
- Խնդիր 2.5

Նպատակ 3. Հասնել աղբահանության կառավարման ֆինանսական կայունությանը:

- Խնդիր 3.1
- Խնդիր 3.2
- Խնդիր 3.3

Նպատակ 4. Ապահովել բնակչության մշտական և հետևողական իրազեկումը և մասնակցությունը աղբահանության կառավարման գործընթացում:

- Խնդիր 4.1
- Խնդիր 4.2
- Խնդիր 4.3

Հիմնահարցեր և խնդիրներ

Աղբահանության ծառայության հետ կապված են մյուս ոլորտներին առնչվող բազմաթիվ հիմնահարցեր (պրոբլեմներ), որոնց լուծման շնորհիվ է հնարավոր աղբահանության կառավարման գործընթացի արդյունավետ զարգացումը: Այսպես, աշխատանքային խմբի հետ համատեղ քննարկվել, խմբավորվել և դասակարգվել են առաջադրած հիմնահարցերը: Աշխատանքային խմբի անդամների կողմից առաջադրված հիմնահարցերը խմբավորվել են չորս հիմնական ոլորտների, որոնք նշված են նախորդ բաժնում:

Խնդիրները ձևակերպվել են ըստ առաջ քաշված հիմնահարցերի: Խխնդիրների լուծումները նպատակաուղղված են ռազմավարական առանձին նպատակների իրականացմանը: Այդ խնդիրների լուծման առաջարկվող ճանապարհները հենց ծրագրերն/նախագծերն են: Ծրագրերի/նախագծերի իրականացման արդյունքները պետք է լինեն չափելի և իրականանալի կոնկրետ ժամանակահատվածում:

Խնդիրները խմբավորվել են ըստ առանձին ոլորտների, որոնցից յուրաքանչյուրը ներկայացնում է առանձին ռազմավարական նպատակ: Որևէ նպատակի իրականացումը պայմանավորված է առանձին խնդիրների լուծումով, այսինքն՝ ծրագրերի/նախագծերի իրականացմամբ:

Հաշվի առնելով առաջադրված խնդիրները՝ կազմվել են կոնկրետ ծրագրեր, որոնք ներառում են հիմնահարցի նկարագրությունը, գործողությունները կամ առաջադրանքները, դրանց կատարման ժամկետները, պատասխանատուները, ֆինանսավորման հնարավոր աղբյուրները, յուրաքանչյուր ծրագրի սպասվելիք արդյունքները և կապը մյուս ծրագրերի հետ: Ժամանակային առումով ծրագրերը բաժանվել են երեք հիմնական մասերի՝ կարճաժամկետ, միջնաաժամկետ և երկարաժամկետ ծրագրեր:

Աշխատանքային խմբի կողմից կատարվել է առաջնահերթությունների որոշում 1-5 սանդղակով՝ 1-ը համարելով ավելի քիչ առաջնահերթ և 5-ը՝ ամենաառաջնահերթ:

Խնդիրներ, Վանաձոր	Առաջնա հերթության միավոր
Նպատակ 1: Կառավարում և ներքին օրենսդրություն	
Աղբահանության համակարգի ռազմավարության մշակում	5
Աղբի բաղադրության պարբերական ուսումնասիրություն	5
Աղբի բաղադրության որոշման կարողությունների բարձրացում	5
Աղբահանության ծառայություն մատուցողների հետ երկարաժամկետ պայմանագրերի կնքում	4
Մասնավոր հատվածի ներգրավում աղբահանության իրականացման գործընթացում	4
Նպատակ 2: Աղբահանության կառավարման ենթակառուցվածքներ	
Նոր մասնագիտացված տեխնիկայի ձեռքբերում	5
Լրացուցիչ աղբամանների տեղադրում խառը աղբի համար	5
Լրացուցիչ աղբամանների պլաստիկ աղբի համար	5
Մամլիչ կամ մանրացնող մեքենաների ձեռքբերում	5

Խնդիրներ, Վանաձոր	Առաջնա հերթության միավոր
Աղբի վերամշակման արտադրամասերի, հոսքագծերի հիմում	5
Ախտահանող սարքավորումների ձեռքբերում	4
Գործող աղբավայրի փակում	3
Նոր աղբավայրի կամ տարածաշրջանային աղբավայրի հիմնում՝ տեսակավորման ենթակառուցվածքներով	3
Տեսակավորված աղբի միջանկյալ փոխաբեռնման կայանների և պահեստավորման կետերի հիմնում	3
Նպատակ 3: Ֆինանսական արդյունավետություն	
Աղբահանության իրականացման ինքնարժեքի հաշվարկ	5
Աղբահանության վճարների հավաքագրման մեծացում	5
Տուգանքների կիրառում	5
Փոստի/ բանկի միջոցով աղբահանության վարձավճարների գանձման կազմակերպում	4
Աղբահանության իրականացման մեջ համայնքային բյուջեի մասնաբաժնի նվազեցում	3
Առանձին հաշվապահական հաշվառում՝ աղբահանության կառավարման գծով	3
Նպատակ 4: Հանրային իրազեկում և մասնակցություն	
Բնակիչների գոհունակության և վճարունակության հարցումների անցկացում	5
Շրջակա միջավայրի պահպանությանն ուղղված կրթության խթանում	5
Շրջակա միջավայրի պահպանությանն ուղղված շաբաթօրյակների կազմակերպում	4
Դպրոցահասակների համար բնապահպանական գիտելիքի մրցույթների կազմակերպում	4

Իրավիճակային վերլուծություն (SWOT)

Հաշվի առնելով Վանաձորի աղբահանության ներկայիս իրավիճակը կատարվել է աղբահանության ներքին պոտենցիալի և արտաքին բարենպաստ ազդեցության, ինչպես նաև թույլ կողմերի և արտաքին բացասական ազդեցությունների վերլուծություն (SWOT վերլուծություն): Ստորև ամփոփ ներկայացվում է այդ վերլուծության արդյունքները, որոնք կատարվել են աշխատանքային խմբի անմիջական մասնակցությամբ:

Վանաձոր քաղաքի աղբահանության SWOT վերլուծություն

Աղբախցերից	2.24			20	2.24	
Գրաֆիկով՝ տնից կամ կազմակերպությունից	5.06			45	5.06	
Չանգով՝ տնից կամ կազմակերպությունից (չորջիկ մեքենաներով)	0.56			5	0.56	
Պատվերով՝ տնից կամ կազմակերպությունից	1.12			10	1.12	
Ինքնափոխադրում ²¹	1.01			9	1.01	

Աղյուսակ 8 - Համայնքներում կոշտ թափոնների հավաքն ըստ մեթոդի և բնակչության ծածկույթի (ներկա իրավիճակ)²²

Վանաձորում աղբահանությունն իրականացվում է տարվա բոլոր ամիսներին, առանց ընդհատումների: Վանաձորի քաղաքապետարանը քաղաքի տարածքի աղբահանության և սանիտարական մաքրման վիճակը բարելավելու նպատակով քաղաքը բաժանել է 6 գոտիների, որոնք սպասարկվում են մրցութային հիմունքներով ընտրված 5 կազմակերպությունների կողմից.

- 1-ին գոտի. աշխատանքները իրականացնում է «Էկովան» ՍՊԸ-ն, որը սպասարկում է քաղաքի «Թագավորանիստ», «Բազում», «Դիմաց», «Ուսանողական»՝ 32,728 բնակչի (սպասարկման գոտում հաշվառված է 39243 բնակիչ):

²¹ Համաձայն «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» ՀՀ օրենքի՝ շինարարական և խոշոր եզրաչափի աղբ առաջացնողները ազատվում են աղբահանության վճարից, եթե նշված աղբը փոխադրվում և տեղադրվում է սեփական միջոցներով՝ տվյալ օրենքի 8-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված թույլտվության հիման վրա կամ՝ նույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված անձանց հետ՝ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքված պայմանագրի հիման վրա:

²² Ըստ համայնքապետարանի կոմունալ բաժնի փորձի

- 2-րդ գոտի. աշխատանքները իրականացնում է «Պագամի» ՍՊԸ-ն, որը սպասարկում է քաղաքի «Խանդակ» և «Խնձորուտ» թաղամասերը՝ 18490 բնակչի (սպասարկման գոտում հաշվառված է 22170 բնակիչ):
- 3-րդ գոտի. աշխատանքները իրականացնում է «Վանաձորի Սանմաքրում» ԲԲԸ-ն, որը սպասարկում է քաղաքի «Կենտրոն», «Ջուխտախպուր», «Տալկուտ» թաղամասերը՝ 14528 փաստացի բնակչի (սպասարկման գոտում հաշվառված է 17420 բնակիչ):
- 4-րդ գոտի. աշխատանքները իրականացնում է «Էկովան» ՍՊԸ-ն, որը սպասարկում է Վանաձոր թաղամասը՝ 8267 բնակչի (սպասարկման գոտում հաշվառված է 9913 բնակիչ):
- 5-րդ գոտի. աշխատանքները իրականացնում է «Գարիկ Ղափանյան» Ա/Ձ-ն, որը սպասարկում է «Քիմշին» թաղամասերը՝ 18710 բնակչի (սպասարկման գոտում հաշվառված է 22435 բնակիչ):
- 6-րդ գոտի. աշխատանքները իրականացնում է «Աշոտ Մկրտչյան» ՍՊԸ-ն, որը սպասարկում է «Տավրոսի», «Առափնյա», «Տարոն» և «Առդա» թաղամասերը՝ 18710 բնակչի (սպասարկման գոտում հաշվառված է 22435 բնակիչ):

Աղբահանության Կառավարում

Աղբի հավաքման, հեռացման և վճարների հավաքագրման գործընթացում գործնականում թերի է նաև ոլորտին վերաբերող ներքին օրենսդրությունը, կանոնակարգերն ու համապատասխան որոշումները: Աղբահանությունը իականացվում է համայնքի ավագանու 23.12.2015 թվականի թիվ 63-Ա որոշմամբ²³, որի համաձայն սահմանվում է աղբահանության իրականացման կարգը, աղբահանության դրույքաչափերը աղբահանության իրականացման նվազագույն ժամանակացույցը: Որոշման համաձայն աղբահանության գծով բնակչության ամսական վճարը սահմանվել է 200 դրամ/մարդ: Սահմանվել են նաև ոչ կենցաղային և խոշոր եգրաչափերի մեկ խորանարդ մետր աղբի, շինարարական աղբի, ըստ ծավալի՝ մեկ խորանարդ մետր կենցաղային աղբի, ըստ զանգվածի՝ մեկ տոննա կենցաղային աղբի հավաքման, կուտակման, տեղափոխման և տեղափոխման արժեքները:

Աղբահանության կառավարումը, վճար վճարողների հաշվառումը, աղբահանության վճարի հաշվարկումը, ինչպես նաև այդ վճարի գանձումը իրականացվում է Վանաձորի քաղաքապետարանի համապատասխան ստորաբաժանման միջոցով:

Աղբահանություն իրականացնող օպերատորների աշխատակազմեր ընդհանուր թիվը՝ 74 է, այդ թվում՝ վարչական աշխատողներ՝ 5:

Վանաձոր քաղաքում աղբահանության ծառայություն մատուցող կազմակերպություններում աշխատակիցների թվաքանակը.

Աղբահանության գոտիներ	Վարորդ	Բարձր բանվոր	Մաքրող բանվոր	Ընդամենը՝ ըստ գոտու
1 գոտի	4	4	5	13
2 գոտի	4	4	4	12
3 գոտի	4	4	4	12
4 գոտի	3	3	3	9
5 գոտի	3	3	4	10
6 գոտի	4	4	5	13
Ընդամենը	22	22	25	69

²³ <https://vanadzor.am/woroshum-63-a/>

Նշված կազմակերպությունները միաժամանակ իրականացնում են իրենց կողմից սպասարկվող տարածքների սանիտարական մաքրումը:

Տարիներ շարունակ գործող կառավարման նման ձևը համայնքապետարանը համարում է անարդյունավետ: Աղբահանող ընկերությունների հետ պայմանագրերը ստորագրվում են 2 ամիսը մեկ անգամ, որը անարդյունավետ և ռեսուրսատար գործընթաց է: Աղբահանող ընկերությունները՝ ունենալով կարճաժամկետ պայմանագրեր շահագրգռված չեն ներդրումներ կատարել, որը ազդում է ծառայության որակի վրա. ցածր աշխատավարձեր, ֆիզիկապես և բարոյապես մաշված մեքենասարքավորումներ և այլն: Առաջիկայում համայնքապետարանը մտադիր է փոխել կառավարման ձևը՝ կառավարումը իրականացնելով բյուջետային հիմնարկի կամ համայնքային ոչ առևտրային կազմակերպության (ՀՈԱԿ)-ի միջոցով:

Աղբամանների առկայությունն ու վիճակը

Քաղաքի աղբահանության սխեման հաստատվել է քաղաքի ավագանու 2015թ դեկտեմբերի 23-ի N 63-Ա որոշմամբ: Վանաձորում ներկայումս առկա են 675, որոնք ըստ աղբահանության գոտիների բաշխված տեղադրված են հետևյալ փողոցներում:

Աղբահանության գոտիները	Սպասարկող կազմակերպություններն՝ ըստ գոտիների	Փողոցների թիվը՝ ըստ գոտիների	Աղբամանների քանակը՝ ըստ գոտիների
1 գոտի Թագավորանիստ, Բագում, Ոսանողական, Դիմաց	«Էկոլան» ՍՊԸ	14	154
2 գոտի Խանդակ, Խնձորուտ	«Պագամի» ՍՊԸ	5	125
3 գոտի Կենտրոն, Ցալկուտ, Զովստաղբյուր	«Վանաձորի Սանմաքրում» ԲԲԸ	15	132
4 գոտի Վանաձոր թաղամաս	«Էկոլան» ՍՊԸ	8	66
5 գոտի Քիմշին	«Գարիկ Ղափանյան» Ա/Զ	8	44
6 գոտի Տարոն, Տավրոս, Առափնյա, Առդա	«Աշոտ Մկրտչյան» ՍՊԸ	9	154
Ընդամենը՝	-	-	675

Աղբամանների միջոցով կառավարվում է բազմաբնակարան շենքերի մեծ մասի, կազմակերպությունների և առևտրային օբյեկտների աղբահանությունը: Բազմաբնակարան շենքերի մի մասի աղբը կառավարվում է աղբամուղերի միջոցով: Համայնքը ԲԲԾ-ներում մտադիր է աղբահանությունն իրականացնել ամենօրյա հաճախականությամբ: Դա իրավական ամրագրում պետք է ստանա Ավագանու որոշման մեջ: Իսկ մինչ այդ, համայնքը պատրաստակամ է գործնականում իրականացնել ամենօրյա աղբահանություն: Անհատական բնակելի տների համար իրականացվում է շրջիկ աղբահանություն, անմիջապես աղբատար մեքենաների միջոցով՝ շաբաթական 2 անգամ հաճախականությամբ:

Գործող՝ 675 խառը կենցաղային աղբի աղբամանների ընդհանուր տարողությունը 607.5 խոր.մ է: Մինչև 90% բեռնվածությամբ և ներկա հաճախականությամբ, գործող աղբամանները կարող են տեղավորել ամսեկան մոտ 16,400 խոր.մ, տարեկան՝ 196,830 խոր.մ, մինչդեռ աղբամաններով կառավարվող՝ արտադրված աղբի ծավալը տարեկան մոտ 55,000 խոր.մ է: Հետևաբար, միջին հաշվարկով, աղբամանների ներկա թվով և հաճախականությամբ, ենթադրվում է, որ աղբամանները պետք է լինեն կիսադատարկ:

Ընդհանուր աղբի աղբամաններ տարողությունը բավարար է, սակայն դրանց գերակշիռ մասը՝ մաշված և անմխիթար վիճակում են, հարմարեցված չեն նոր սերնդի մասնագիտացված աղբատար մեքենաներին: Աղբամանները տեղադրված են բանուկ վայրերում, բազմաբնակարան շենքերի մեծ մասի հարևանություն, հարևանությամբ: Քաղաքը աշխատում է ապահովել աղբամանների սանիտարահիգիենիկ վիճակը, սակայն ի վիճակի չէ ապահովել պահանջվող բոլոր ստանդարտները: Աղբամանները և աղբատար մեքենաները ախտահանվում են, քաղաքում իրենց տեղակայման վայրերում և գործնական բակում: Ախտահանումը տեղի է ունենում ջրցանի միջոցով, որը լիցքավորված է քլորացված ջրով: Ախտահանումից հետո ջրի հետագա հոսքը անվերահսկելի է՝ դրանից բխող համապատասխան բացասական հետևանքներով:

Աղբատարների նորացման հետ մեկտեղ անհրաժեշտություն կա նաև նոր, ավելի մեծ՝ 1,1 խոր.մ բերնատարողությամբ աղբամանների ձեռք բերման, որոնք կհարմարացվեն նոր սերնդի աղբատարներին, ինչպես նաև կփոխարինեն հին և մաշված աղբամաններին և պահուստային ֆոնդ կստեղծվի ախտահանման նպատակով աղբամանները պարբերաբար փոխարինելու համար:

Քաղաքի կողմից որդեգրված՝ ջերմոցային գազերի աստիճանական նվազեցման քաղաքականության համատեքստում, տեսակավորման և վերամշակման միջոցով պլաստիկ թափոնների կրճատման նպատակով, անհրաժեշտ է ավելացնել նաև պլաստիկ թափոնների տեսակավորման աղբարկղերի թիվը:

Քաղաքում առկա են պլաստիկ աղբի 40 աղբաման՝ 28 խոր.մ ընդհանուր տարողությամբ: Տարեկան, աղբահանության ներկա հաճախականությամբ, առկա աղբամաններում հնարավոր է տեղավորել քաղաքում արտադրվող պլաստիկ աղբի միայն միայն 53 տոկոսը: Մնացած հատվածը կա՛մ խառնվում է ընդհանուր աղբի հետ, կա՛մ չի կառավարվում՝ հեռացվում կամ օգտագործվում է տարերայնորեն:

Խնդրի լուծման համար անհրաժեշտ է ավելացնել պլաստիկ աղբի տեսակավորման աղբամանների թիվը: ԵՄ կողմից ֆինանսավորվող «Դաշինք՝ հանուն կայուն և կանաչ կառավարման» ծրագրի շրջանակում Վանաձոր քաղաքի համար ձեռք կբերվի 330 ընդհանուր աղբի և 330 պլաստիկ աղբի տեսակավորման աղբամաններ: Դա լիովին կօգնի կառավարել արտադրվող պլաստիկ աղբը: Քաղաքապետարանը պետք է ավելի ինտենսիվացնի աշխատանքը աղբարտադրողների հետ՝ փոխելու նրանց վարքագիծը և խթանելու աղբի տեսակավորման ու վերամշակման գործելակերպը կրթական, իրազեկման միջոցառումների և սոցիալական գործազդների միջոցով:

Աղբի հեռացման հաճախականությունը

Վանաձորում աղբահանությունը իրականացվում է հետևյալ հաճախականությամբ.

Քաղաքի փողոցներում տեղադրված կենցաղային աղբի համար նախատեսված աղբարկղերից՝ ամենօրյա, բազմաբնակարան շենքերի աղբամուղներից՝ 3 օրը մեկ անգամ, անհատական բնակելի տներից՝ շրջիկ երթերի միջոցով՝ շաբաթը 2 անգամ:

Չնայած աղբահանության հաճախականությունը բավական ինտենսիվ է, արտադրվող աղբի մի զգալի մաս մնում է անկառավարելի: Հիմնական պատճառն այն է, որ աղբահանություն իրականացնող աղբատարների և ինքնաթափերի բեռնատարողությունը չի բավարարում աղբահանությունը լիարժեք իրականացնելու համար:

Քաղաքի այդ գործող մեքենաները իրենց ամբողջ կարողությամբ չեն աշխատում, հաճախակի ենթարկվում են հիմնական և ընթացիկ նորոգման: Աղբի լիարժեք կառավարման համար քաղաքը պետք է ձեռք բերի ավելի մեծ բեռնատարողությամբ և սեղմման հնարավորություն ունեցող 5-6 մասնագիտացված աղբատար մեքենաներ:

Պլաստիկ աղբը նույնպես գրեթե չի կառավարվում, տեսակավորումը իրականացվում է միայն 40 աղբամանների միջոցով՝ որով տեսակավորվում է արտադրվող պլաստիկ աղբի միայն չնչին մասը: Այն հեռացվում է ամիսը 2 անգամ հաճախականությամբ: Վանաձորի քաղաքապետարանի կողմից իրականացվող ԵՄ «Դաշինք՝ հանուն կայուն և կանաչ կառավարման» ծրագրով պլաստիկ աղբի տեսակավորման 330 աղբամանի տրամադրման քաղաքում արտադրվող պլաստիկ աղբը լիովին կկառավարվի՝ պահպանելով ներկա հաճախականությունը:

1.5.2 Աղբահանության գործող օպերատորներ

#	Օպերատորի անվանում	Օպերատորի կողմից պարտադիր հավաքվող թափոնի տեսակ(ներ)	Պլանավորման տարածքի ծածկույթ (%)	Օպերատորի կողմից սպասարկվող քաղաքներ	Սպասարկվող տարածքի բնակչության թիվ	Օպերատորի աղբատար մեքենաների տեսակ և տարողություն (խմ) (բաց թափքով, փակ թափքով կոմպակտոր, այլ)	Օպերատորի աղբատար մեքենաների թիվը	Արդյոք կարողությունը բավարարում է ներկայիս կարիքների համար (բավարար է, բավարար չէ)	Օպերատորի աշխատանքի ընդհանուր գնահատական	Վառելիքի տեսակը
1	«Էկովան» ՍՊԸ	ԿԿԹ	90-95	Վանաձոր	-	Ինքնաթափ 6 մ ³ , ԿՕ 8 մ ³	4	միջին	3	բենզին/բն. գազ
2	«Պագամի» ՍՊԸ	ԿԿԹ	90-95	Վանաձոր	-	Ինքնաթափ 6 մ ³ , ԿՕ 8 մ ³	4	միջին	3	բենզին/բն. գազ
3	«Վանաձորի Սանմաքրում» ԲԲԸ	ԿԿԹ	90-95	Վանաձոր	-	Ինքնաթափ 6 մ ³ , ԿՕ 8 մ ³	4	միջին	3	բենզին/բն. գազ
4	«Էկովան» ՍՊԸ	ԿԿԹ	90-95	Վանաձոր	-	Ինքնաթափ 6 մ ³ , ԿՕ 8 մ ³	3	միջին	3	բենզին/բն. գազ
5	«Գարիկ Ղափանյան» Ա/Ձ	ԿԿԹ	90-95	Վանաձոր	-	Ինքնաթափ 6 մ ³ , ԿՕ 8 մ ³	3	միջին	3	բենզին/բն. գազ
6	«Աշոտ Մկրտչյան» ՍՊԸ	ԿԿԹ	90-95	Վանաձոր	-	Ինքնաթափ 6 մ ³ , ԿՕ 8 մ ³	4	միջին	3	բենզին/բն. գազ

Աղյուսակ 9 - Աղբահանության գործող օպերատորներ

Վանաձորի աղբահանության և սանիտարական մաքրման նպատակներով օգտագործվում են 22 մեքենասարքավորումներ: Դրանք ներառում են՝ մասնագիտացված աղբատարներ (10) և ինքնաթափեր (12):

Աղբահանության իրականացնող աղբատար մեքենաների թափքերի ընդհանուր ծավալը 152 խոր.մ է (80 խոր.մ +72 խոր.մ): Եթե հաշվի առնենք որ քաղաքում նշված մեքենաներով տարեկան հնարավոր է հավաքել շուրջ 37,800 խոր.մ աղբ (հաշվի առնելով մեքենաների բեռնատարողությունը և աղբի հեռացման տարբեր

հաճախականությունները՝ աղբամաններից, աղբամուղերից և շրջիկ) և հաշվի առնելով, որ համայնքում տարեկան արտադրվում է 67,000 խոր.մ աղբ)՝ 29,200 խոր մետր աղբ կամ արտադրվող աղբի ավելի քան 40 տոկոսը մնում է անկառավարելի:

Աղբահանության մեքենասարքավորումները, մասնավորապես մասնագիտացված աղբատարների պարկը, թարմացման կարիք ունեն: Այժմ աղբահանության մեջ օգտագործվում են մասնագիտացված և ոչ մասնագիտացված մեքենաներ, որոնք շահագործվում են տասնյակ տարիներ և հիմնականում ֆիզիկապես մաշված են: Մեքենաները իրենց ամբողջ կարողությամբ չեն աշխատում, հաճախակի ենթարկվում են հիմնական և ընթացիկ նորոգման, մեծ տոկոս է կազմում հատկապես ընթացիկ և հիմնական նորոգմանն ու վառելիքի ձեռքբերմանն ուղղված ծախսերը:

Քաղաքի աղբահանության ռազմավարությանը աջակցող ԵՄ կողմից ֆինանսավորվող «Դաշինք՝ հանուն կայուն և կանաչ կառավարման» ծրագրի շրջանակում և պետական սուբվենցիոն միջոցների հաշվին ձեռք կբերվեն մասնագիտացված աղբատար մեքենաներ:

Սա կմեղմացնի, բայց չի լուծի քաղաքի աղբահանության խնդիրը՝ հաշվի առնելով նաև այն որ վարչատարածքային բարեփոխումների արդյունքում Վանաձորը դարձել է բազմաբնակավայր համայնք և անհրաժեշտ է պատշաճ աղբահանություն ապահովել նաև համայնքի մյուս բնակավայրերի համար: Խնդիրը լուծելու համար քաղաքին անհրաժեշտ կլինի թարմացնել աղբահանության մեքենասարքավորումների գործնական բակը՝ մասնավորապես ձեռք բերելով 5-6 մասնագիտացված աղբատար 20 խմ բեռնատարողությամբ՝ առնվազն 2 անգամ սեղմման գործակցով:

1.5.3 Տեղափոխման սխեմաներ

Այս ենթաբաժինը նախորդի լրացումն է: Այստեղ հարկավոր է նկարագրել, թե ինչպես է պլանավորման տարածքում կատարվում թափոնների տեղափոխումը: Օրինակ՝ մշակման կայանքների կամ հեռացման վայրերի (աղբավայրերի) տեղակայվածությունը, արդյոք առկա է ինքնափոխադրում թափոն գոյացնողների կողմից, եթե այո, ապա ինչպես և ուր են տեղափոխվում այդ թափոնները: Նկարագրությունները պետք է տրվեն թափոնների վերոնշյալ *հիմնական* հոսքերի մասով:

Թափոնի հիմնական հոսք	Հեռավորություն մինչև աղբավայր (կմ)	Հեռավորություն մինչև փոխաբեռնման կայան (կմ)	Հեռավորություն մինչև տեսակավորման կենտրոն (կմ)	Հեռավորություն մինչև այլ գործածության կայանք (կմ)	Նշումներ ինքնափոխադրման մասով
Կոշտ կենցաղային թափոններ	10				
Խոշոր եզրաչափերի թափոններ	6				
Փայթեթավորում և փայթեթվածք	10				
ԷԷՍ (Էլեկտրական և էլեկտրոնային սարքեր)	10				
Վտանգավոր թափոններ (բացի ԷԷՍ թափոններից)	10				
Անվաղողեր	6				
Շ/Ք թափոններ	6				
Շահագործման ոչ պիտանի մեքենաներ	6				

Աղյուսակ 10 - Թափոնների տեղափոխումն ըստ հոսքերի և գործածության ձևի (ներկա իրավիճակ)²⁴

²⁴ Ըստ համայնքապետարանի տվյալների

1.5.4 Վերօգտագործում և նախապատրաստում վերօգտագործման համար

Աղբի տեսակավորում և վերամշակում

Քաղաքում թափոնների կազմակերպված տեսակավորում և վերամշակում գրեթե չի կատարվում: Հանրապետությունում տարբեր տեսակի ապակու, թղթի և պլաստիկների, վերամշակման հնարավորություններ կան: Մի շարք քաղաքներում արդեն սկսել են իրականացնել աղբի, հիմնականում պլաստիկ շշերի, տեսակավորման առաջին քայլերը և տեղադրվում են հատուկ աղբարկղեր տեսակավորված աղբի համար: Ներկայում Վանաձորում շահագործվում է պլաստիկ շշերի առանձնացման համար նախատեսված 40 աղբաման՝ ընդհանուր 28 խոր.մ տարողությամբ:

Այլ համայնքներում աղբի տեսակավորման և վերամշակման առաջին քայլերն են կատարվում դոնոր կազմակերպությունների և հասարակայան կազմակերպությունների կողմից: Շուրջ 25 քաղաքներում, օրինակ, «Ուրբան» հիմնադրամը քաղաքների հետ պայմանավորվածություն է ձեռք բերել աղբը տեսակավորել աղբյուրի մոտ՝ բնակիչների կողմից, հենց իրենց տներից՝ տրամադրելով տեսակավորման աղբամաններ և մամիչներ: Նախ, դա թույլ կտա կրճատելու աղբավայր տեղափոխվող աղբի ծավալները, տեսակավորված աղբը, օրինակ, պլաստիկ շշերը, որոնք երկրորդային արտադրության հումք են հանդիսանալու, աղբյուրի մոտ տեսակավորվելու դեպքում ավելի մաքուր և որակյալ հումք կլինեն: Բացի այդ, բնակիչներն անմիջական մասնակցություն կունենան տեսակավորման գործընթացին, այլ կերպ ասած, աղբի ծավալների կրճատմանը, ինչը կնպաստի աղբահանության և ընդհանրապես բնապահպանական խնդիրների վերաբերյալ նրանց մտածելակերպի և վարքագծի փոփոխությանը:

ԵՄ կողմից ֆինանսավորվող «Դաշինք՝ հանուն կայուն և կանաչ կառավարման» ծրագիրը աջակցելու է սույն ռազմավարությամբ նախատեսված՝ աղբի, մասնավորապես, պլաստիկ աղբի տեսակավորման և վերամշակման հիմնախնդրի հասցեագրմանը:

Վանաձորում տարեկան արտադրվում է շուրջ 3,640 խոր.մ կամ 1,3 տ պլաստիկ աղբ, արտադրված տարեկան աղբի քաշի 7,6 տոկոսը: Քաղաքում առկա են պլաստիկ աղբի 40 աղբաման՝ 28 խոր.մ ընդհանուր տարողությամբ: Տարեկան, աղբահանության ներկա հաճախականությամբ, առկա աղբամաններում հնարավոր է տեղավորել քաղաքում արտադրվող պլաստիկ աղբի միայն 13 տոկոսը: Մնացած հատվածը՝ 87 տոկոսը կա՛մ խառնվում է ընդհանուր աղբի հետ, կա՛մ չի կառավարվում՝ հեռացվում կամ օգտագործվում է տարերայնորեն: Օրինակ, ըստ ՀԱՀ Յակոբեան բնապահպանական կենտրոնի և ՀԱՀ «Մանուկյան Սիմոն» հետազոտական հիմնադրամ ի՝ «Հայաստանի Հանրապետության թափոնների քանակի և բաղադրության վերլուծություն»²⁵:

²⁵ Հայաստանի Հանրապետության թափոնների քանակի և բաղադրության վերլուծություն, Երևան. ՀԱՀ Յակոբեան բնապահպանական կենտրոն և ՀԱՀ «Մանուկյան Սիմոն» հետազոտական հիմնադրամ, «LL Bolagen», (2020): - <https://ace.aua.am/files/2020/08/WOCS-Report-Arm.pdf>

#	Արտադրանքի տեսակ	Վերադարձվող և վերօգտագործվող բաղադրիչի տեսակ (ապակե տարա, պլաստիկ տարա, և այլ փաթեթավորում)	Արտադրողի անվանում	Վերադարձի կամ հավաքման մեխանիզմ (ընդունվում է միայն գործարանում, ընդունվում է խանութներում, կան հատուկ ընդունման կետեր)	Սպառողի համար արտադրանքը վերադարձնելու հարմարության մակարդակ (1 - անհարմար 2 - հարմար 3 - հեշտ)	Նշումներ
1						հավաքվում են անկանոն փարբեր շահագրգիռ անձանց կամ ԱԶ-ների կողմից /1-2/կետեր
2						

Աղյուսակ 11 - Վերօգտագործում իրականացնող արտադրողներ (ներկա իրավիճակ)

#	Արտադրանքի տեսակ	Վերանորոգման կետերի թիվ	Նշումներ
1	Սառնարան	5	հավաքվում են անկանոն փարբեր շահագրգիռ անձանց կամ ԱԶ-ների կողմից/ 1-7/կետեր
2	Լվացքի մեքենա	5	հավաքվում են անկանոն փարբեր շահագրգիռ անձանց կամ ԱԶ-ների կողմից/ 1-7/կետեր
3	Այլ կենցաղային տեխնիկա	7	հավաքվում են անկանոն փարբեր շահագրգիռ անձանց կամ ԱԶ-ների կողմից/ 1-7/կետեր
4	Հազուստ ու կոշիկ	15	հավաքվում են անկանոն փարբեր շահագրգիռ անձանց կամ ԱԶ-ների կողմից/ 1-7/կետեր
5	Կահույք	15	հավաքվում են անկանոն փարբեր շահագրգիռ անձանց կամ ԱԶ-ների կողմից/ 1-7/կետեր
6	Ավտոպահեստամասեր	20	հավաքվում են անկանոն փարբեր շահագրգիռ անձանց կամ ԱԶ-ների կողմից/ 1-7/կետեր
7	Շինարարական բաղադրիչներ (օր.՝ դուռ, պատուհան)	10	հավաքվում են անկանոն փարբեր շահագրգիռ անձանց կամ ԱԶ-ների կողմից/ 1-7/կետեր

Աղյուսակ 12 - Վերանորոգման կարողություններ (ներկա իրավիճակ)

1.5.5 Ոչ ֆորմալ հատված (տեսակավորում սկզբնաղբյուրում կամ աղբավայրերում)

Այս ենթաբաժնում նկարագրվում է ոչ ֆորմալ հատվածի կողմից իրականացվող թափոնների տեսակավորման և օգտահանման գործունեությունը ինչպես աղբավայրերում, այնպես էլ քաղաքներում՝ գյուղական և քաղաքային միջավայրում, օրինակ՝ փողոցի աղբամաններից, խանութների շրջակայքից, բակերից և այլ աղբյուրներից:

#	Տեսակավորվող թափոնի տեսակ	Հավաքվում է հատուկ ընդունման կետերում (այո/ոչ)	Հավաքվում է աղբամաններից (այո/ոչ)	Հավաքվում է խանութների շրջակայքից (այո/ոչ)	Հավաքվում է աղբավայրերում (այո/ոչ)	Հավաքվում է այլ տեղերից (նշել)
1	Ապակե թափոններ	այո	ոչ		ոչ այո	
2	Մետաղյա թափոններ	այո	ոչ		ոչ ոչ	
3	Պլաստիկ թափոններ	այո	այո		այո այո	
4	Թղթե թափոններ	այո	ոչ		ոչ ոչ	
5	Մեքենայի մարտկոցներ	այո	ոչ		ոչ ոչ	
6	Այլ թափոններ (նշել տեսակը)					
7						

Աղյուսակ 13 - Ոչ ֆորմալ հատվածի կողմից իրականացվող թափոնների տեսակավորում և օգտահանում (ներկա իրավիճակ)

Մասնավորապես, պլաստիկ աղբը ամբողջությամբ կառավարելու ռազմավարական հիմնախնդրի հասցեագրում կիրականացվի ԵՄ կողմից ֆինանսավորվող «Դաշինք՝ հանուն կայուն և կանաչ կառավարման» ծրագրի շրջանակում. Վանաձորքաղաքին կտրամադրվի պլաստիկ աղբի տեսակավորման 330 աղբաման:

Համապարփակ հաշվարկ, թե պլաստիկ թափոնների մեջ, որ պլաստիկը, որքան քաշ ու ծավալ ունի, Հայաստանում չի իրականացվել: Հայաստանի տարբեր քաղաքերում պլաստիկի առանձնացման համար տեղադրված աղբամանների մեջ պլաստիկի 80%-ը պոլիէթիլենտերևտալատ (ՊԷՏ) է, մնացածը՝ հիմնականում պոլիէթիլեն, պոլիպրոպիլեն, պոլիստիրոլ: Այսինքն՝ թե՛ բնապահպանական, թե՛ տնտեսական առումներով, Հայաստանում առաջին հերթին նպատակահարմար է կազմակերպել հենց պոլիէթիլենտերևտալատի վերամշակումը: Իսկ ավելի սահմանափակ քանակով գոյացող պլաստիկ թափոնների համար կիրառել վերամշակման այնպիսի տեխնոլոգիա, որտեղ պլաստիկ թափոնի հումքը հանդես է գալիս որպես բաղադրիչ պատրաստի արտադրանք ստանալու համար: Օրինակ, այդպիսի տեխնոլոգիա է կիրառվում պոլիմերավազային արտադրանքի համար:

1.5.6 Թափոնների գործածության կայանքներ

Թափոնի հիմնական հոսք	Առկայություն (առկա է պլանավորման տարածքում, առկա է այլ քաղաքում, առկա չէ)	Հզորություն, կարողություն (հազ. տ/տարի)	Հեռավորություն պլանավորման տարածքից (կմ)	Նշումներ
Տեսակավորման կենտրոն	առկա չէ			
Ապակու վերամշակման կայանք	առկա չէ			
Թղթի վերամշակման կայանք	առկա չէ			
Պլաստիկի վերամշակման կայանք	առկա չէ			
Մետաղի վերամշակման կայանք	առկա չէ			
Տեքստիլի վերամշակման կայանք	առկա չէ			
Այլ վերամշակման կայանք	առկա չէ			
Տեսակավորման կենտրոն	առկա չէ			
Օրգանական թափոնների կոմպոստացման կայանք	առկա չէ			
Օրգանական թափոններից կենսագազի արտադրման կայանք	առկա չէ			
Այլ օգտահանման կայանք (նշել)	առկա չէ			
Աղբակիզման կայանք	առկա չէ			
Այլ վնասագերծման/վերացման կայանք	առկա չէ			
Փոխաբեռնման կայան	առկա չէ			
Աղբավայր(եր)	առկա է			
Ավելացնել տողերն ըստ անհրաժեշտության				

Աղյուսակ 14 - Թափոնների գործածության կայանքներ (ներկա իրավիճակ)

1.5.7 Աղբավայրեր և աղբանոցներ

Սույն ենթաբաժնում նկարագրվում են պլանավորման տարածքում առկա բոլոր գործող և չգործող աղբավայրերը, ինչպես նաև դրանից դուրս գտնվող այն աղբավայրերը, որոնք շահագործվում են նույն տարածքի քաղաքների կողմից:

#	Աղբավայրի նույնականացման կոդ (կտրամադրվի ՏԿԵՆ քարտեզագրման բազայից)	Աղբավայրը շահագործող քաղաք(ներ)	Աղբավայրի մոտավոր մակերես (հա)	Աղբավայրի վիճակ Շահագործման սկիզբ	Շահագործման նախատեսված ավարտի (տարի)	Տեղադրվող աղբի տեսակներ	Ոչ ֆորմալ հատվածի կողմից իրականացվող աղբի տեսակավորում և օգտահանում	Սեփականության իրավունք	Օբյեկտին տրվող ռեստորային համարը (<< ՇՄ նախարարություն)	ՇՄԱԳ-ի առկայություն	Ստեղծման իրավական հիմք, իրավական հիմքի համար, ամսաթիվ տարի	Շահագործողի անվանում, կազմակերպարարական ձև	ՇՄԱԳ	Թափոն տեղադրելու վճար (<< դրամ/տոննա)	Տարեկան մուծված բնապահպանական վճարի չափ (<< դրամ)
1	Արջուտի աղբավայր	Վանաձոր և այլ հարակից քաղաքներ	5,6	Այրվում է, պարբերաբար ծածկվում է հողով:	2050	Կենցաղային	Առկա է	Վանաձորի Սանմաքրում ԲԲԸ				Քաղաքապետարան	Չի անցկացվել	-	-
2	Տարոն 4 աղբավայր	Վանաձոր	1,7			շինարարական	Առկա է	Քաղաքապետարան				Քաղաքապետարան	Չի անցկացվել	-	-

Աղյուսակ 15 - Աղբավայրեր և աղբանոցներ (ներկա իրավիճակ)

Աղբավայր

Աղբավայրը գտնվում է Վանաձոր-Երևան ավտոմայրուղու աջ կողմում, Արջուտ գյուղի վարչական տարածքում, քաղաքից 15կմ հեռավորության վրա և զբաղեցնում է 6.537 հա տարածք: Այն տեղավորված է բնական իջվածքում: Կատարվել է տեղանքի ուսումնասիրություն: Տարածքը չունի ցանկապատ, ապահովված չէ արտաքին ջրերի մուտքից, չի կատարվում աղբավայր տեղափոխվող թափոնների հաշվառում, ինչպես նաև հսկողություն աղբի որակի նկատմամբ: Շատ հնարավոր է վտանգավոր թափոնների, հատկապես հիվանդանոցի թափոնների տեղադրում աղբավայրում: Ցանկապատ չլինելու պատճառով աղբավայրի ամբողջ շրջակայքով մեկ տարածված են թղթի մնացորդներ և պոլիէթիլենային տոպրակներ, ազատ է մարդկանց ու կենդանիների մուտքը, հիմնականում չի կատարվում աղբավայրի շահագործման հետ կապված բնապահպանական և սանիտարական աշխատանքները, որի պատճառով աղբավայրը անընդհատ ծխում է: Կատարվում է ամենշաբաթյա հարթեցում, հողաձածկում:

Ներկայումս «Արջուտ»-ի աղբավայրը, սեփականության իրավունքով շահագործում է «Սանմաքրում» ԲԲԸ-ն: Վերոնշյալ խնդիրները հուշում են, որ Ընկերությունը առաջնահերթ պետք է ձեռնամուխ լինի աղբավայրի տարածքի ցանկապատման, ճանապարհի բարեկարգման, ինչպես նաև աղբավայրում աղբի որակի ու քանակի նկատմամբ վերահսկողություն իրականացնանը:

«Արջուտի»-ի աղբավայր է տեղափոխվում հավաքված կենցաղային աղբը: Բոլոր ընկերությունները պայմանագիր ունեն և աղբի հարթեցման և խտացման համար վճարում են ամսեկան գումարներ: «Արջուտի» է տեղափոխվում նաև խոշոր եզրաչափերի աղբը:

Շինարարական աղբը տեղափոխվում է հատուկ այդ նպատակի համար նախատեսված Տարոն-4 թաղամասում գտնվող աղբաթափման վայր: Այն գտնվում է մոտ 10-15մ խորությամբ կիրճի հարևանությամբ: Բեռնատարները թափոնները դատարկում են կիրճի պոնկին, իսկ այնուհետև տրակտորով դրանք հրվում են դեպի ձորը տարին մեկ կամ երկու անգամ:

Աղբավայրի խնդրի հասցեագրման տարբերակներից կարող էլ լինել միջհամայնքային աղբավայրի կառուցումը՝ պետության աջակցությամբ ներդրումներ կատարելու միջոցով: Այժմ պետությունը, ի դեմս ՀՀ տարածային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության, նախատեսում է իրականացնել տարածքի ուսումնասիրություն: Ժամանակակից աշխարհում ավանդական պատկերացմամբ աղբավայր հասկացությունը աստիճանաբար վերանում է: Ժամանակակից աղբավայրերում կա՛մ լինում են տեսակավորման հոսքագծեր, կա՛մ քաղաքում ստեղծվում են տեսակավորման ենթակայաններ, որտեղ բնակիչները կարող են հեռացնել տեսակավորված աղբը: Վանաձորի համայնքապետարանը աստիճանաբար պետք է ձգտի այս մոդելին և աստիճանաբար աղբի տեսակավորումը պետք է դարձնի պարտադիր:

4	Բնակչություն											
5	Քաղաքացիական կազմակերպություն	100%	100%									

Աղյուսակ 17 – ԿԹ տեղական կառավարման մեջ շահակիրների ներգրավվածության աստիճանը (ներկա իրավիճակ)

#	Թափոնի թափոնի (մանրամասնել՝ ավելացնելով շարքեր՝ ըստ անհրաժեշտության)	Իրազեկության բարձրացում	Տեսակավորված հավաք	Խառը, չտեսակավորված հավաք	Տեղափոխում	Գործարանային տեսակավորում	Վերօգտագործում	Վերակիրառում	Վերամշակում	Էներգիայի օգտահանում	Մշակում	Հեռացում աղբավայր
1	Կոշտ կենցաղային թափոններ	ՏԻՄ	--	ՏԻՄ	ՏԻՄ	--	--	--	--	--	--	ՏԻՄ
2	Խոշոր եզրաչափերի թափոններ	ՏԻՄ	--	ՏԻՄ	ՏԻՄ	--	ՄՀ	--	--	--	--	ՏԻՄ
3	Փաթեթավորում և փաթեթվածք	ՔԿ	--	ՏԻՄ	ՏԻՄ	--	--	--	--	--	--	ՏԻՄ
4	ԷԷՍ (էլեկտրական և էլեկտրոնային սարքեր)	ՔԿ	--	ՏԻՄ	ՏԻՄ	--	--	--	--	--	--	ՏԻՄ
5	Վտանգավոր թափոններ (բացի ԷԷՍ)	ՔԿ	--	ՏԻՄ	ՏԻՄ	--	--	--	--	--	--	ՏԻՄ
6	Անվաղողեր	ՔԿ	--	ՏԻՄ	ՏԻՄ	--	--	--	--	--	--	ՏԻՄ
7	Մարտկոցներ	ՔԿ	--	ՏԻՄ	ՏԻՄ	--	--	--	--	--	--	ՏԻՄ
8	Շ/Ք թափոններ	ՏԻՄ	--	ՏԻՄ	ՏԻՄ	--	--	--	--	--	--	ՏԻՄ
9	Շահագործման պիտանի մեքենաներ	ՏԻՄ	ՔԿ	ՏԻՄ	ՏԻՄ	--	ՄՀ	ՄՀ	ՄՀ	--	--	ՏԻՄ
10	Թափոնի այլ հոսքեր (մանրամասնել)	ՏԻՄ	--	ՏԻՄ	ՏԻՄ	--	--	--	--	--	--	ՏԻՄ

Աղյուսակ 18 – ԿԹ տեղական կառավարման մեջ շահակիրների ներգրավվածությունն ըստ թափոնի հոսքերի (ներկա իրավիճակ)

1.5.10 Անձնակազմի կարողությունների գնահատում

Արդյունավետ պլանավորման համար կարևոր է հստակ գնահատել ԿԹ տեղական կառավարման մեջ ներգրավված տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների համապատասխան անձնակազմի կարողությունները՝ ըստ անհրաժեշտ հմտությունների մակարդակի: Այս վերլուծությունը պետք է հիմք հանդիսանա 2.3.3 ենթաբաժնում անձնակազմի կարողությունների զարգացմանն ուղղված միջոցառումների և նպատակների մշակման համար:

#	Հմտություն կամ ոլորտ	Հմտությունն ունեցող աշխատակիցների թիվ	Հմտության ներկայիս մակարդակ (1-շատ ցածր, 2- ցածր, 3-միջին, 4-բարձր, 5-գերազանց)	Դրումներ
1	Տվյալների հավաքում	10	3	
2	Համակարգչային քարտեզագրում	5	4	
3	Գնումների կազմակերպում	5	4	
4	Պայմանագրերի կառավարում	7	4	
5	Գործառնական հմտություններ	10	4	
6	Թափոնների կառավարման գիտելիքներ	4	3	
7	ՀՀ օրենսդրության իմացություն	4	3	
8	Ֆինանսական վերլուծության իմացություն	5	3	

Աղյուսակ 19 - Անձնակազմի կարողությունների գնահատում (ներկա իրավիճակ)

1.5.11 Թափոնների գործածության քարտեզ

Արդյունավետ լոգիստիկ լուծումներ գտնելու տեսանկյունից ԿԿԹ կառավարման պլանավորման համար կարևոր է թափոնների գործածության օբյեկտների տեղակայման մասին հստակ տեղեկությունը, ինչպես նաև վերջիններիս տեսողական վերապատկերումը քարտեզի վրա: Այս ենթաբաժնում պետք է տեղադրվի քարտեզ, որը կպատկերի նախորդ ենթաբաժններում նկարագրված թափոնների տեսակավորման, մշակման և օգտահանման կայանքները, փոխաբեռնման կայանները, աղբավայրերը և այլ տարերայնորեն գործող, չվերահսկվող հեռացման վայրերը, դրանց մուտքի ճանապարհահատվածները և պլանավորման տարածքում թափոնների գործածության հետ կապված այլ կարևոր օբյեկտները, եթե առկա են:

Համակարգչային քարտեզագրման ծրագրավորման կարողությունների առկայության դեպքում ցանկալի է, որ քարտեզը ստեղծվի որևէ ծրագրային ապահովման միջոցով և պատկերի տեսքով զետեղվի սույն ենթաբաժնում: Համակարգչային քարտեզագրման կարողությունների բացակայության դեպքում անհրաժեշտ է պլանավորման տարածքի տպագիր քարտեզի վրա անել համապատասխան նշումները և պատճենի տեսքով տեղադրել սույն ենթաբաժնում:

«Դաշինք՝ հանուն կայուն և կանաչ կառավարման» ծրագիրը աջակցելու է Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմին ձեռք բերելու համակարգչային քարտեզագրման ծրագրավորման կարողություններ ԱՏՀ/GIS վերապատրաստման միջոցով, ինչը հնարավորություն կտա ապահովելու թափոնների գործածության օբյեկտների տեղակայման մասին հստակ տեղեկություն, ինչպես նաև վերջիններիս տեսողական վերապատկերումը քարտեզի վրա:

Վերապատրաստված համայնքային ծառայողների և մասնագետների ուժերով ԱՏՀ/GIS համակարգում կտեղադրվի քարտեզ, որը կպատկերի ներկայում և ապագայում շահագործվող՝ թափոնների տեսակավորման, մշակման և օգտահանման կայանքները, փոխաբեռնման կայանները, աղբավայրերը և այլ տարերայնորեն գործող, չվերահսկվող հեռացման վայրերը, դրանց մուտքի ճանապարհահատվածները և պլանավորման տարածքում թափոնների գործածության հետ կապված այլ կարևոր օբյեկտները:

1.6 Իրազեկության ներկայիս մակարդակ

Թափոնների կայուն կառավարումը մեծապես կախված է թե՛ հանրային, թե՛ ԿԹ տեղական կառավարման մեջ ներգրավված տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների աշխատակազմի իրազեկության մակարդակից: Կառավարման մարմինների իրազեկությունը հատկապես կարևոր է տեղական մակարդակում առաջնահերթություններ սահմանելու, որոշումներ կայացնելու և պլանավորման ժամանակ, այն մեծապես կնպաստի այդ որոշումները և պլանավորված գործողությունները իրականացնելուն: Հետևաբար իրազեկության մակարդակի գնահատումը առանցքային դեր է խաղում պլանավորման ժամանակ, հատկապես դրա բարձրացմանն ուղղված միջոցառումները մշակելու պարագայում:

1.6.1 Իրազեկության գնահատման եղանակ

Իրազեկության գնահատումը կարող է արվել տարբեր մեթոդաբանություններով, սակայն կարևոր է, որ պլանավորման տարածքում, պարբերաբար կատարվելու դեպքում մշտապես կիրառվեն միևնույն մեթոդաբանությունը և ցուցանիշները՝ տվյալների համադրելիություն ապահովելու նկատառումներով:

Այստեղ առաջարկվում է իրազեկության գնահատման մի պարզ եղանակ՝ հարցման հիման վրա: Ստորև ներկայացված է երկու հարցում հանրային իրազեկության և ԿԹ տեղական կառավարման մեջ ներգրավված տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների աշխատակազմի իրազեկության մակարդակի գնահատման համար:

Հարցման արդյունքները պետք է ամփոփվեն ստորև բերված աղյուսակում:

#	Հնտություն կամ ոլորտ	Իրազեկության ներկայիս (1-շատ 2- ցածր, 4-բարձր, 5-գերազանց)	մակարդակ ցածր, 3-միջին,	Նշումներ
1	Թափոնների թերի կառավարման բնապահպանական ազդեցություններ	3		
2	Թափոնների թերի կառավարման սոցիալական ազդեցություններ	3		
3	Թափոնների թերի կառավարման տնտեսական ազդեցություններ	3		
4	Թափոնների՝ աղբավայր հեռացնելու ազդեցություններ	3		
5	Թափոնների հիերարխիայի իմացություն	3		
6	Թափոնների կրճատման օգուտներ	3		
7	Թափոնների տեսակավորված հավաքման օգուտներ	3		
8	Թափոնների կրճատման և վերօգտագործման օգուտներ	3		
9	Թափոնների վերամշակման օգուտներ	3		
10	Թափոնների օգտահանման օգուտներ	3		
11	Տեսակավորված հավաքման ծրագրերի իրազեկություն	3		


Աղյուսակ 20 – Հանրային իրազեկության ներկայիս մակարդակ

1.6.2 Թափոնների կառավարման ծառայություններից բնակիչների գոհունակության գնահատման եղանակ


Թափոնների կառավարման ծառայություններից բնակիչների գոհունակության գնահատումն արվում է հարցման միջոցով: «Դաշինք՝ հանուն կայուն և կանաչ կառավարման» ծրագրի շրջանակում Վանաձոր քաղաքի բոլոր թաղամասերում անցկացվել է ընտրանքային հարցում 384 բնակիչների շրջանում:

Հարցման արդյունքների համաձայն՝ աղբահանությունը ըստ բնակչության համարվում է վերջին անգամ վեր հանված համայնքի 2 առաջնահերթ խնդիրներից մեկը: Հարցման մասնակիցների մոտ 83%-ը այն համարել են հրատապ: Մոտ 64%-ը աղբի տեսակավորումը նույնպես համարում են ամենահրատապ խնդիրների շարքում:


Համայնքի համար հրատապ հիմնախնդիրները



Վերջին անգամ վեր հանված համայնքային հիմնախնդիրները




Աղբահանության ոլորտի հրատապ հիմնախնդիրները



Աղբահանության ոլորտի թվարկված ամենհրատապ խնդիրների շարքում հարցման մասնակիցները նշել են չնախատեսված տեղերում աղբ թափելը բնակչության կողմից, թափառող կենդանիների կողմից աղբի տարածումը, աղբամանների անբավարար քանակը և մեծ հեռավորությունը միմյանցից:


Աղբի տեսակավորման տարաների տեղադրում



Հարցման մասնակիցների 87 տոկոսը կողմ է աղբի տեսակավորման տարաների տեղադրմանը համայնքում:

Հետաքրքիր է, որ 16 տոկոսը նշել են, որ արդեն տեսակավորում են, իսկ 78 տոկոսը պատրաստակամ են տեսակավորել, եթե տեղադրվեն աղբի տեսակավորման աղբամաններ:

Աղբի տեսակավորման պատրաստականություն



Համայնքապետարանի կողմից անցկացված՝ բնակչության գոհունակության հարցման արդյունքները ներկայացված են ստորև աղյուսակում.

#	Չափանիշներ	Գոհունակության ներկայիս մակարդակ (1-շատ 2- դժգոհ 3-միջին 4-գոհ 5-շատ գոհ)	Նշումներ
1	Քաղաքում աղբամանների տեղակայվածություն (որքանով է հեռու տեղիկան շենքից)	3	
2	Քաղաքում աղբամանների վիճակ (որքանով են մաքուր, վնասված)	3	
3	Թափոնների տեսակավորված հավաքում (եթե առկա է, ապա որքանով է հարմարավետ)	2	
4	Թափոնների տեսակավորված հավաքման հաճախակիություն (եթե առկա է, ապա որքանով են պահպանվում նորմերը)	2	
5	Թափոնների չտեսակավորված հավաքման հաճախակիություն (եթե առկա է, ապա որքանով են պահպանվում նորմերը)	4	
6	Խոշոր եզրաչափերի աղբի հավաքում (արդյոք գործում է հարմարավետ մեխանիզմ)	3	
7	Փողոցների մաքրություն	3	
8	Աղբահանության վճար (որքանով է համապատասխանում մատուցված ծառայությանը)	4	
9	Մատուցված ծառայությունների ընդհանուր մակարդակ	3	

Աղյուսակ 21 – Թափոնների կառավարման ծառայություններից բնակիչների գոհունակության մակարդակ

1.7 Ֆինանսավորում և բյուջե

1.7.1 Եկամուտների և ծախսերի ընդհանուր նկարագրություն

Սույն բաժնում ներկայացվում է Վանաձոր քաղաքում իրականացվող ԿԿԹ կառավարման ֆինանսատնտեսական նկարագիրը:

1.7.2 Եկամուտների և ծախսերի ընդհանուր նկարագրություն

Տարի	Բնակչություն			ԿԱՕ-ներ		
	Փաստացի բնակչություն	Պայմանագրեր	Փաստացի հավաքված (%)	ԿԱՕ-ների թիվը	Պայմանագրեր	Փաստացի հավաքված (%)
2021 թ.	77600	-	0%	1336	1147	86%

Աղյուսակ 22 - Պլանավորման փարածքում բնակչության և ԿԱՕ-ների հետ կնքված պայմանագրերը

Աղբահանության գծով քաղաքի բնակչության հետ պայմանագրեր չեն ստորագրվում: Քաղաքում գործունեություն իրականացնող իրավաբանական անձանց թիվը 1 338 է, որոնցից 1 147-ի հետ (86%) ստորագրվել է պայմանագիր:

Տարի	Եկամուտներ վերամշակելի թափոնների վաճառքից (հազ. դրամ)	Այլ եկամուտներ (հազ. դրամ)	Ծախսեր (հազ. դրամ)	Մնացորդ (հազ. դրամ)	Նշումներ
2021 թ.	-	171,36,606.00	Տվյալ չկա		

Աղյուսակ 23 - Պլանավորման փարածքում աղբի կառավարման եկամուտներն ու ծախսերը վերջին փարում՝ ըստ եռամսյակների

Տարի	Բնակչություն			ԿԱՕ-ներ			Ընդամենը		
	Պլան	Փաստացի	%	Պլան	Փաստացի	%	Պլան	Փաստացի	%
2021 թ.	155,429,200.00	136,472,693.00	88%	40,570,800.00	34,663,913.00	85%	196,000,000	171,136,606.00	87%

Աղյուսակ 24 - Բնակչությունից և ԿԱՕ-ներից գանձվող մուտքերը և հավաքման փոկոսները վերջին փարում՝ ըստ եռամսյակների

Վերևում, երկու աղյուսակներում, ներկայացված են պայմանագրերի և եկամուտները կարգավիճակը 2021 թ:

Աղբահանության վճարների գանձումը ֆիզիկական և իրավաբանական անձանցից, եկամուտի աղբյուրներից մեկն է, որով համայնքապետարանը փորձում է ծածկել աղբահանության ծախսերը: Այդ եկամուտների չափը կապված է երկու փոփոխականից. վճարների չափի պլանավորմանից և հավաքագրումից: Որքան շատ է պլանավորվում հավաքագրվող գումարը և որքան պլանավորված գումար շատ է հավաքագրվում, այնքան մեծ են համայնքապետարանի եկամուտները, եթե փոփոխականներից մեկն ու մեկը ցածր են, ապա եկամուտները նվազում են:

Համայնքապետարանը պետք է ձգտի մեծացնել ֆիզիկական և իրավաբանական անձանցից գանձման ենթակա պլանային գումարների չափը՝ մոտեցնելով դրանք իրական ծախսերին: Առայժմ հաջողվում է հավաքագրել շուրջ 85 տոկոսը, մնացածը ծածկվում է համայնքային բյուջեի հաշվին: Միևնույն ժամանակ, պետք է ձգտի բարձրացնել պլանավորված գումարի հավաքագրման տոկոսը: Առայժմ պլանավորումը ընդգրկում է աղբարտադրողների մոտ 85 տոկոսի ծախսերը, մնացած ծախսը նույնպես ստիպված վճարվում է համայնքային բյուջեի հաշվին:

Օրինակ՝ միայն բնակչությունից գանձվող գումարը առավելագույնը հնարավոր է պլանավորվել 183840,000 (77600*200դրամ*12 ամիս): Խնդրո առարկա ժամանակահատվածի պլանավորում կազմում է 155429,200 դրամի փոխարեն: Անհրաժեշտ է անցկացնել հարցում բնակչության շրջանում՝ պարզելու համար վճարելու

պատրաստականության բացակայության պատճառները և համապատասխան քայլեր ձեռնարկել վճարների հավաքագրման տեսակարար կշիռը մեծացնելու ուղղությամբ:

1.7.3 Աղբահանության ընթացիկ վճարի մանրամասներ՝ ըստ հիմնական հոսքերի

Մի շարք քաղաքներում տեղական ինքնակառավարման մարմինները, բացի կոշտ կենցաղային թափոնների աղբահանությունից, կազմակերպում են նաև այլ թափոնների հոսքերի աղբահանությունը, օրինակ՝ խոշոր եզրաչափերի թափոններ կամ որոշ դեպքերում փաթեթավորման և փաթեթվածքի և այլ թափոններ: Հետևաբար կարևոր է տարանջատել նաև դրանց կառավարման ծախսերը:

	I	II	III	IV	V	VI
Թափոնի հիմնական հոսք	Ավագանու կողմից սահմանված աղբահանության վարձավճարը	Թափոնի հավաքման վճարները հավաքելու ընդհանուր ծախսեր	Տարեկան ընդհանուր հավաքված վճարներ	Սուբսիդա վորում	Թափոնի հավաքման համար արված ընդհանուր ծախսեր	
Կոշտ կենցաղային թափոններ						
Խոշոր եզրաչափերի թափոններ	2578դր/խոր. մ					
Փաթեթավորում և փաթեթվածք						
ԷԷՍ (Էլեկտրական և էլեկտրոնային սարքեր)						
Մարտկոցներ						
Վտանգավոր թափոններ (բացի ԷԷՍ թափոններից և մարտկոցներից)						
Անվաղողեր						
Շ/Ք թափոններ	4172դր/խոր. մ					
Շահագործման ոչ պիտանի մեքենաներ						

Աղյուսակ 25 - Աղբահանության ընթացիկ վճարի մանրամասներ՝ ըստ հիմնական հոսքերի

1.7.4 Թափոնների գործածության հասանելի տարբերակների արժեքը

#	Թափոնի հոսք կամ թափոնի տեսակ (մանրամասնել՝ ավելացնելով շարքեր՝ ըստ անհրաժեշտության)	Տեսակ վորված հավաք (դրամ/տոննա)	Խառը չտեսակ վորված հավաք	Տեղա փոխում (դրամ/տոննա)	Գործարա նային տեսակ վորում (դրամ/տոննա)	Վաճառք իբրև հումք օգտահանելու համար (դրամ/տոննա)	Կոմպոս տացում (դրամ/տոննա)	Աղբա կիզում (դրամ/տոննա)	Այլ մշակում (վտանգավոր թափոնների չեզոքա ցում, վնասա գերծում) (դրամ/տոննա)	Տեղադրում աղբավայր ում (դրամ/տոննա)
1	Կոշտ կենցաղային թափոններ									
2	Խոշոր եզրաչափերի թափոններ		2578դր/խոր. մ							
3	Փաթեթավորում և փաթեթվածք									
4	ԷԷՍ (Էլեկտրական և էլեկտրոնային սարքեր)									
5	Վտանգավոր թափոններ (բացի ԷԷՍ թափոններից)									
6	Անվաղողեր									
7	Մարտկոցներ									
8	Շ/Ք թափոններ		4172դր/խոր. մ							

9	Շահագործման ոչ պիտանի մեքենաներ									
10	Թափոնի հոսքեր (մանրամասներ)	այլ								

Աղյուսակ 26 - Թափոնների գործածության հասանելի տարբերակների արժեքն ըստ հոսքերի (ներկա իրավիճակ)

1.7.5 ԿԹ կառավարման ներկայիս ինքնարժեքը՝ ըստ հիմնական հոսքերի

ԿԹ կառավարման ներկայիս ինքնարժեքի հաշվարկը պլանավորման պարտադիր բաղադրիչներից է: Այն հաշվարկվում է ԿԹ ամեն հոսքի համար, որի դեպքում առկա է կազմակերպված գործածություն: ԿԹ կառավարման առաջարկված ինքնարժեքի հաշվարկի համար մշակվել է MS Excel ծրագրային ապահովում պահանջող գործիք:²⁶

Հարկ է նշել, որ այն դեպքում, երբ կոշտ թափոնի տվյալ հոսքը աղբավայրում տեղադրելու համար վճարվում է բնապահպանական հարկ, այն ևս պետք է ներառվի ԿԹ կառավարման ինքնարժեքի հաշվարկում: Տարբեր վտանգավորության դասի թափոններ աղբավայրում տեղադրելու համար Հայաստանում սահմանված բնապահպանական հարկերի չափը ներկայացված է ստորև:

Արտադրության և (կամ) սպառման թափոններ՝ ըստ վտանգավորության դասի	Դրույքաչափը մեկ տոննայի համար (ՀՀ դրամ)
Առաջին դասի վտանգավորության թափոններ	62,400
Երկրորդ դասի վտանգավորության թափոններ	31,200
Երրորդ դասի վտանգավորության թափոններ	6,240
Չորրորդ դասի վտանգավորության թափոններ (բացառությամբ ֆիզիկական անձանց առաջացրած չտեսակավորված սպառման թափոնների աղբահանության և սանիտարական մաքրման աշխատանքներ իրականացնող օպերատորների)	1,950
Ոչ վտանգավոր թափոններ	780

Պատկեր 1 - Ընդերքօգտագործման, արտադրության և (կամ) սպառման թափոնները հատուկ հարկացված տեղերում տեղադրելու կամ պահելու համար բնապահպանական հարկի դրույքաչափերը 2021 թվականից հետո:

Աղբյուր՝ ՀՀ հարկային օրենսգիրք

Անվանումը	Կոշտ կենցաղային թափոններ	Խոշոր եզրաչափերի թափոններ	Փաթեթավորում և փայթեթվածք	ԷԷՍ	Վտանգավոր թափոններ (բացի ԷԷՍ թափոններից)	Անվաղողեր	Մարտկոցներ	Շ/Ք թափոններ	Շահագործման ոչ պիտանի մեքենաներ	Թափոնի այլ հոսքեր (մանրամասներ)
Աշխատուժ (դրամ/տարի)	-									
Արտահագուստ և գործիքներ (դրամ/տարի)	-									
Տեխնիկայի շահագործում և պահպանում (դրամ/տարի)	-									
Վառելիք (դրամ/տարի)	-									
Աղբամանների շահագործում և պահպանում (դրամ/տարի)	-									
Վարչական ծախսեր (դրամ/տարի)	-									
Բնապահպանական հարկ (դրամ/տարի)	-									
Այլ ծախսեր (դրամ/տարի)	-									

²⁶ ԿԹ կառավարման առաջարկված ինքնարժեքի հաշվարկի գործիքը հասանելի է ներբերումնան համար հետևյալ կայքէջում՝ https://ace.aqa.am/hy/waste/planning_guidelines/deliverables:

Ենթագումար	-									
ԱԱՀ (20%)	-									
Ընդհանուր ծախսը (դրամ/տարի)	-									
Բնակչություն (մարդ)	77600									
Թափոնի տարեկան գոյացում (հազ. տոննա)	23500									
Միավորի ինքնարժեքը (դրամ/տոննա)	-									
Մեկ անձի հաշվով փաստացի ինքնարժեքը (դրամ/մարդ)	-									
Մեկ անձի կողմից գոյացրած թափոնի քանակ (տ/տարի)	3.3									

Աղյուսակ 27 – Կոշտի թափոնների կառավարման ինքնարժեքը՝ ըստ հիմնական հոսքերի (ընթացիկ տարվա դրությամբ)

Աղբահանության ծառայության վարձավճարները

Բնակչությունից գանձվող աղբահանության վճարը սահմանվել է համայնքի ավագանու 2015թ դեկտեմբերի 23-ի N 63-Ա որոշմամբ: Ավագանու որոշմամբ՝ այն կազմում է 200 դրամ/մարդ:

Ոչ կենցաղային և խոշոր եզրաչափերի մեկ խորանարդ մետր աղբի տեղափոխման արժեք՝ 2,578 ՀՀ դրամ: Աղբահանության վճարները գանձվում են շրջիկ տեսուչների ինչպես նաև են նաև բանկի, փոստիմիջոցով:

Շինարարական աղբի տեղափոխման արժեքը՝ մեկ խորանարդ մետրի համար՝ 4,192 ՀՀ դրամ : Շինարարական աղբը տեղափոխվում է հատուկ այդ նպատակի համար նախատեսված Տարոն-4 թաղամասում գտնվող աղբաթափման վայր

Աղբահանության գծով ընկերության եկամուտներն ու ծախսերը

Աղբահանության իրականացման համար համայնքապետարանը տարեկան՝ աղբահանող ընկերությունների միջոցով համայնքի բյուջեից ծախսում է 220 մլն դրամ: 10 մլն դրամ ծախսվում է խոշոր եզրաչափի աղբը հեռացնելու և 54 մլն դրամ սանիտարական մաքրման աշխատանքներն իրականացնելու համար: Դրա դիմաց 2021թ դրությամբ, համայնքապետարանը պլանավորել հավաքագրել 196 մլն դրամ, իսկ աղբարտադրողներից հաջողվել է գանձել ընդամենը 171,136 մլն դրամ, որը կազմում է ընդհանուր ծախսերի 60 տոկոսը:

Աղբահանության ծառայության ինքնարժեքը:

Չնայած աղբահանության ծախսերի գերակշիռ մասը համայնքապետարանը դեռևս ստիպված է ծածկել համայնքի բյուջեի հաշվին՝ աղբահանության համակարգի արդյունավետ կառավարման և աստիճանաբար ինքնաձախսաձածկման հասնելու համար անհրաժշտ է հաշվարկել մեկ անձի հաշվով աղբի հավաքման, կուտակման, տեղափոխման և տեղակայման ինքնարժեքը:

Ներկայումս համայնքում աղբի հավաքման, տեղափոխման և տեղակայման ինքնարժեքի հաշվարկ չի կատարվում:

Եզրակացություն և առաջարկություններ

ԿԿԹ կառավարում

ԿԿԹ կառավարումը դեռևս անարդյունավետ է.

Աղբատարներ: Վանաձոր քաղաքում աղբահանություն իրականացնող մասնագիտացված աղբատար մեքենաները չեն բավարարում, իսկ գործողները արդեն ֆիզիկապես մաշված են, պարբերաբար ենթարկվում են ընթացիկ և կապիտալ նորոգման:

Քաղաքը կարիք ունի թարմացնելու աղբահանության մեքենասարքավորումների իր գործնական բակը՝ նվազագայունը այն համալրելով 5-6 մասնագիտացված աղբատարներով: Միայն այդ դեպքում հնարավորություն կստեղծվի կառավարել քաղաքում արտադրվող ամբողջ աղբը:

Աղբամաններ: Գործող աղբամանների քանակը բավարար է աղբամանների միջոցով կառավարվող աղբի տեղադրման համար: Սակայն աղբամանների մեծ մասը նույնպես ֆիզիկապես գերմաշված են, իսկ չափերը չեն համապատասխանում ժամանակակից աղբատարների կողմից աղբամանների չափերին ներկայացվող պահանջներին:

Անհրաժեշտ է թարմացնել, խառը, ընդհանուր աղբի աղբամանների ֆոնդը՝ հին աղբամանները փոխարինելով ժամանակակից աղբատարներին հարմարեցված աղբամաններով: Անհրաժեշտ է ձեռք բերել նաև աղբի տեսակավորման աղբամաններ:

Ֆինանսական կառավարում: Աղբահանության եկամուտներ դեռևս ծածկում են ծախսերի մոտ 60 տոկոսը, մնացածը ծածկվում է համայնքի բյուջեի հաշվին: Համայնքապետարանը պետք է ունենա աղբի հավաքման, կուտակման, տեղափոխման և տեղակայման ինքնարժեքի հաշվարկ, ինչը այժմ չունի: Դա անհրաժեշտ է արդյունավետ ֆինանսական կառավարման համար: Անհրաժեշտ է բարձրացնել աղբարտադրողներից գանձվող գումարների պլանավորման տոկոսը, վճարների հավաքագրման տոկոս: Դա կարելի է անել աղբարտադրողների հետ իրազեկման, բացատրական աշխատանքների մեխանիզմի ստեղծման միջոցով: Կիրառվող գործալակերպերից է նաև հավաքագրման գործառույթը մասնավոր հատվածին պատվիրակելու մոտեցումը:

Հանրային իրազեկում և կրթություն: Հանրության հետ աշխատանքը առանցքային նշանակություն ունի պատշաճ աղբահանություն իրականացնելու համար: Հանրությունը հաճախ տարբեր ընկալումներ ունի այս կամ այն խնդրի, դրանց կարևորության, լուծման ճանապարհների, այդ խնդրի լուծման համար պատասխանատուների ցանկությունների և կարողությունների վերաբերյալ: Ընկալումները կարող են լինել տեղին՝ հիմնված անցյալի փորձի վրա և թյուր, որը գալիս է անիրազեկությունից և գիտելիքի պակասից:

Նույնը կարելի է ասել աղբահանության ոլորտի մասին: Աղբահանության վերաբերյալ բնակչության ընկալումները հասկանալու արդյունավետ մեթոդներից է հանրային կարծիքի ուսումնասիրությունը, որը թույլ է տալիս ոչ միայն հասկանալ բնակչության ընկալումները, այլ նաև ստեղծել այդ ընկալումները կառավարելու և ճիշտ ուղղորդելու գործիքակազմ ներառյալ.

- Տեսաձայնային միջոցների օգտագործում իրազեկման և կրթման համար

- Սոցիալական գովազդներ. կարճ տևողության այս տեսահոլովակները, հստակ ուղերձով, որը կարող է զգալի փոփոխություն մտցնել բնակչության վարքագծում և մտածելակերպում:
- Հեռուստա/ռադիո հաղորդումներ/քննարկումները շահագրգիռ կողմերի մասնակցությամբ ոլորտի վերաբերյալ տարբեր կարծիքները հանրությանը փոխանցելու համար
- Ցուցանակները և պաստառները՝ պատկերային կամ բառային հակիրճ նպատակային ուղերձներով, նպաստում են մարդկանց վարքագծի ու մտածելակերպի փոփոխությանը:
- Կրթական միջոցառումներ: Դասընթացներ, սեմինարներ տարբեր լսարանների՝ հատկապես դպրոցականների, երիտասարդների համար աղբի արդյունավետ կառավարման, շրջակա միջավայրի և մարդու առողջության վրա աղբի վնասակար ազդեցության վերաբերյալ, Գիտելիքի մրցույթներ, տեղեկատվական բուկլետներ և պաստառներ:
- Համայնքի մոբիլիզացման միջոցառումներ: Համայնքային քննարկումները, հանդիպումները աղբահանության տարբեր խնդիրների վերաբերյալ կարևոր են բնակչությանն իրազեկելու համար և փորձելու նրանց դարձնել ավելի շուտ դաշնակից, քան ընդդիմախոս: Այս հանդիպումներին նպատակահարմար է հրավիրել համայնքային ակտիվ խմբերին, երիտասարդներին, տարեցների, կանանց, ՀԿ-ներին և շագագրգիռ այլ անձանց: Համայնքի մոբիլիզացման միջոցառումների օրինակներ են շաբաթօրյակները, բնապահպանական թեմաներով երթերը և նկարչական մրցույթները, որոնք կրթական նշանակություն, ազդում են մարդկանց վարքագծի վրա և համախմբում են համայնքի բնակչությանը ընդհանուր խնդրի համատեղ լուծման շուրջ:

Օպերատորների կարողություններ և կառավարում

Վանաձորի տարածքում աղբահանությունն ու աղբի վերամշակումը թիրախային ցուցանիշին հասցնելու նպատակով տեսակավորված հավաքն ավելացնելու համար անհրաժեշտ է օպերատորի անձնակազմի վերապատրաստում, հանրային իրազեկության բարձրացում, ինպես նաև լոգիստիկայի, գրաֆիկների վերանայում և այլ անհրաժեշտ փոփոխություններ:

Քանի որ այժմ մասնավոր օպերատորների միջոցով աղբահանության կառավարումը արդյունավետ չէ, համայնքապետարանը կառավարման բարեփոխումներ պետք է նախաձեռնի՝ կառավարումը իրականացնելով համայնքային ոչ առևտրային կազմակերպության կամ համայնքային բյուջետային հիմնարկի միջոցով: Այս միջոցառումը կարող է լինել միջանկյալ միջոցառում՝ աղբահանության կառավարումը կայունացնելու նպատակով՝ անմիջապես համայնքապետարանի վերահսկողության ներքո:

ԿԶՆ 13. ձեռնարկել անհապաղ գործողություններ՝ պայքարելու կլիմայի փոփոխության և դրա ազդեցությունների դեմ:

Թափոնների կառավարմանն առնչվող հարցերը նաև արտացոլված են առանցքային ազգային ռազմավարություններում և միջազգային համաձայնագրերում, ինչպիսիք են, օրինակ, ՀՀ կառավարության 2019-2023 թթ-ի ծրագիրը [iv], ՀՀ 2017-2036 թթ. կոշտ թափոնների կառավարման համակարգի զարգացման ռազմավարությունը [iv], Մաքուր արտադրության հայեցակարգը [iv], ՀՀ և ԵՄ միջև ստորագրված համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագիրը (ՀԸԳՀ) [vi]:

ՀՀ սահմանադրություն և թափոններին վերաբերող միջազգային համաձայնագրեր

Հայաստանի Հանրապետության սահմանադրության 10-րդ և 12-րդ հոդվածներում սահմանվում են բնական ռեսուրսների օգտագործման պայմանները: Մասնավորապես.

Հոդված 10. Սեփականության երաշխավորումը

²⁷ Այս խնդրի վերաբերյալ մանրամասն տվյալները հասանելի են հետևյալ կայքէջում՝ <https://www.gov.am/en/news/item/9554/>:

²⁸ ԿԶՆ-ների իրագործման վերաբերյալ մանրամասները հասանելի են հետևյալ (անգլերեն) զեկույցում՝ “SDG Implementation Voluntary National Review (VNR) Armenia”, https://sustainabledevelopment.un.org/content/documents/19586Armenia_VNR_2018.pdf:

1. Հայաստանի Հանրապետությունում ճանաչվում և հավասարապես պաշտպանվում են սեփականության բոլոր ձևերը:
2. Ընդերքը և ջրային ռեսուրսները պետության բացառիկ սեփականությունն են:

Հոդված 12. Շրջակա միջավայրի պահպանությունը և կայուն զարգացումը

1. Պետությունը խթանում է շրջակա միջավայրի պահպանությունը, բարելավումը և վերականգնումը, բնական պաշարների ողջամիտ օգտագործումը՝ ղեկավարվելով կայուն զարգացման սկզբունքով և հաշվի առնելով պատասխանատվությունն ապագա սերունդների առջև:
2. Յուրաքանչյուր ոք պարտավոր է հոգ տանել շրջակա միջավայրի պահպանության մասին:

Հայաստանը թափոնների կառավարմանն առնչվող 10 միջազգային համաձայնագրերի կողմ է: Աղյուսակ 1-ում նշված են այդ համաձայնագրերի անուններն ու ստորագրման տարեթվերը:

#	Համաձայնագիր	Վավերացման տարի
1	«Մեծ հեռավորությունների վրա օդի միջսահմանային աղտոտվածության մասին» 1979 թվականի նոյեմբերի 13-ի կոնվենցիա	1997
2	«Շրջակա միջավայրի առնչությամբ տեղեկատվության մատչելիության, որոշումների կայացման գործընթացին հասարակության մասնակցության և արդարադատության մատչելիության մասին» կոնվենցիա (Հավելված 1)	1998
3	«Վտանգավոր թափոնների անդրսահմանային տեղափոխման և դրանց հեռացման նկատմամբ հսկողություն սահմանելու մասին» Բազելյան կոնվենցիա	1999
4	Արդյունաբերական վթարների անդրսահմանային ազդեցության մասին Հելսինկյան կոնվենցիա	1997
5	Միջազգային առևտրում առանձին վտանգավոր քիմիական նյութերի և պեստիցիդների վերաբերյալ նախնական հիմնավորված համաձայնության ընթացակարգի մասին Ռոտերդամի կոնվենցիա	2004
6	«Կայուն օրգանական աղտոտիչների մասին» Ստոկհոլմի կոնվենցիա	2004
7	«Աշխատած վառելիքի և ռադիոակտիվ թափոնների կառավարման անվտանգության մասին» համատեղ կոնվենցիա	2013
8	Սնդիկի վերաբերյալ Մինամատայի կոնվենցիա	2017

9	«Էլեկտրոնային և էլեկտրատեխնիկական սարքավորումների թափոնների գործածության ոլորտում ԱՊՀ մասնակից պետությունների համագործակցության մասին» համաձայնագիր	2018
10	«Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածքով վտանգավոր թափոնների անդրսահմանային տեղափոխման մասին» Եվրասիական տնտեսական միության համաձայնագիր	2015
11	«Մաքսային միության մաքսային սահմանով ֆիզիկական անձանց կողմից անձնական օգտագործման ապրանքների տեղափոխման և դրանց բացթողման հետ կապված մաքսային գործառնություններ իրականացնելու կարգի մասին» 2010 թվականի հունիսի 18-ի համաձայնագիր	2010

Աղյուսակ 4 - Հայաստանի մասնակցությունը թափոնների կառավարմանն առնչվող միջազգային համաձայնագրերին Աղբյուր՝ Սոյն զեկույցի հեղինակների կողմից փարբեր աղբյուրներից հավաքված տվյալներ

#	Համաձայնագիր	Վավերացման տարի
1	Համաձայնագիր «ՀՀ կառավարության և Վրաստանի Կառավարության միջև շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների պահպանության բնագավառում համագործակցության մասին»	1997
2	Փոխըմբռնման հուշագիր «Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության և Իրանի Իսլամական Հանրապետության բնապահպանական վարչության միջև բնապահպանական համագործակցության վերաբերյալ»	2001
3	Համաձայնագիր «Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության և Տաջիկստանի Հանրապետության բնապահպանության նախարարության միջև շրջակա միջավայրի պահպանության բնագավառում համագործակցության մասին»	2003
4	Հայաստանի «Հանրապետության բնապահպանության նախարարության և Սիրիայի Արաբական Հանրապետության շրջակա միջավայրի հարցերով պետական նախարարության միջև բնապահպանության ոլորտում համագործակցության մասին» համաձայնագիր»	2009
5	Համաձայնագիր «Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության և Լատվիայի Հանրապետության շրջակա միջավայրի պահպանության նախարարության միջև բնապահպանության ոլորտում համագործակցության մասին»	2009
6	Փոխըմբռնման հուշագիր «Հայաստանի Հանրապետության կառավարության և Լիբանանի Հանրապետության կառավարության միջև շրջակա միջավայրի բնագավառում համագործակցության մասին»	2011

Աղյուսակ 5 - Հայաստանի կողմից ստորագրված բնապահպանությանն առնչվող միջպետական համաձայնագրեր Աղբյուր՝ Տարբեր աղբյուրներից հավաքված տվյալներ

ՀՀ կառավարության 2019-2023 թվականների ծրագիր

2019 թ.-ի փետրվարին հրապարակված կառավարության ծրագրով սահմանվում են երկրի բնապահպանական կառավարման ընդհանուր ուղղությունները՝ հատկապես կենտրոնանալով քիմիական նյութերի և թափոնների (ներառյալ հանքարդյունաբերական թափոնների)՝ բնապահպանական առումով արդյունավետ կառավարման վրա: Քաղաքացիների համար հարմար և էկոլոգիապես անվտանգ կենսապայմաններ ապահովելու և շրջակա միջավայրի ու հանրային առողջության վրա կոշտ կենցաղային թափոնների բացասական (վտանգավոր) ազդեցությունները նվազեցնելու նպատակով ծրագիրը նախատեսում է հետևյալը՝

- միջազգային ստանդարտներին համապատասխանող թափոնների կառավարման համակարգ հիմնելու ինստիտուցիոնալ շրջանակ,
- թափոնների կառավարման ծախսերի վերականգնում՝ թափոնների բարելավված հավաքման վճարի և ոլորտում ավելի արդյունավետ պայմանագրերի կնքման և իրավական շրջանակի միջոցով,
- թափոնների հեռացման և վերամշակման ծրագրերի իրականացում միջազգային հաստատությունների հետ համագործակցությամբ:

ՀՀ կառավարության ծրագրի կիրարկումն ապահովելու նպատակով ՀՀ կառավարության 16.05.2019 թ.-ի թիվ 650-Լ որոշմամբ հաստատվել է Կառավարության 2019-2023 թվականների գործունեության միջոցառումների ծրագիրը: Աղյուսակ 9-ը ցույց է տալիս կոշտ թափոնների կառավարման հիմնական ուղղություններին աջակցող գործողությունները, որոնք սահմանված են ծրագրում:

#	Գործողություն և արդյունք	Ժամկետ
95.1	«Քիմիական նյութերի մասին» օրենքի նախագիծը վարչապետի աշխատակազմ ներկայացնելը:	Հունիս 2020
95.4	Թափոնների կառավարման հայեցակարգային մոտեցումների մշակում (նպատակաուղղված այդ թափոնների առաջացման կանխարգելմանը կամ կրճատմանը, վերամշակմանը և օգտահանմանը):	Օգոստոս 2019
97.1	Բնապահպանության նախարարության կողմից լիցենզիաների ու թույլտվությունների տրամադրման էլեկտրոնային համակարգի ներդնում:	Նոյեմբեր 2020
97.3	Շրջակա միջավայրի բաղադրիչների (մթնոլորտային օդի, ջրային ռեսուրսների՝ ներառյալ քաղցրահամ և ստորերկրյա ջրերի, հողերի, կենսաբազմազանության) և թափոնների հեռացման վայրերի մշտադիտարկման դիտացանցերի արդիականացում:	Նոյեմբեր 2022
97.5	Շրջակա միջավայրի վերաբերյալ միասնական տեղեկատվական համակարգի ստեղծում:	Սեպտեմբեր 2023
99.1	Տնտեսական մեխանիզմների կիրառման միջոցով պլաստիկ թափոնների ծավալների կրճատում, մասնավորապես, մեկանգամյա օգտագործման պոլիէթիլենային տոպրակների ծավալների կտրուկ կրճատում:	Հունիս 2019
102.1	Կրթության բոլոր մակարդակներում էկոլոգիական դաստիարակության արդյունավետ իրականացում:	Դեկտեմբեր 2020
102.2	Ոչ ֆորմալ էկոլոգիական կրթության համակարգի զարգացում՝ հանրային իրազեկման մեխանիզմների կիրառմամբ:	2022-2023
226.2	ՀՀ համայնքերում աղբահանության ծառայությունների դիմաց վարձավճարների հավաքման մակարդակի բարձրացում:	Սեպտեմբեր 2020

226.3	Աղբահանության համակարգի ռազմավարության մշակում (Հանրապետության բոլոր համայնքերում գոյացող աղբի հավաքման, հեռացման և անվնաս տեղադրման կամ վերամշակման ապահովման նպատակով):	Օգոստոս 2019
-------	---	-----------------

Աղյուսակ 6 - Կոշտի թափոնների կառավարման հիմնական ուղղություններին ծրագրով (N-65Ա) սահմանված աջակցող գործողությունների ամփոփ նկարագրություն

Արտադրատեսակների համար արտադրողի (ներմուծողի) պատասխանատվության ընդլայնման (ԱՊԸ) համակարգերի ներդրման ռազմավարություն

2018 թ. -ի ապրիլի 12-ին ՀՀ կառավարությունն ընդունել է «Արտադրատեսակների համար արտադրողի (ներմուծողի) պատասխանատվության ընդլայնման համակարգերի ներդրման ռազմավարությանը և դրանից բխող 2018-2021 թվականների միջոցառումների ծրագրին հավանություն տալու մասին» արձանագրային որոշումը: ԱՊԸ հիմքում ընկած ռազմավարության համաձայն՝ արտադրողը կամ ներմուծողը, տվյալ առարկայի արտադրության (ներմուծման) սկզբնական փուլում նախատեսում է այդ արտադրատեսակի (ապրանքի) օգտագործման վերջնական փուլում առաջացող բնապահպանական ազդեցությունները կանխարգելող (կամ բացասական ազդեցությունները չեզոքացնող) միջոցառումներ ու կրում է վարչական և ֆինանսական պատասխանատվություն նշված բացասական ազդեցությունների վերացման համար: ԱՊԸ համակարգի նպատակները հետևյալն են.

6. թափոնների արտադրության կանխարգելում,
7. թափոնների քանակի նվազեցում դրանց գոյացման սկզբնաղբյուրում,
8. վերամշակում՝ որպես երկրորդային հումքային նյութեր,
9. վերամշակում՝ որպես երկրորդային էներգետիկ ռեսուրս,
10. թափոնների թաղում աղբավայրերում (թափոնների կառավարման ամենաքիչ նախընտրելի մեթոդ):

ԱՊԸ համակարգի ներդրման հիմնական երկարաժամկետ նպատակը բնապահպանական պահանջները բավարարող արտադրության խթանումն է, ինչը կօգնի կանխելու շրջակա միջավայրի աղտոտումը և նվազեցնելու բնական ռեսուրսների գործածությունը արտադրության բոլոր ցիկլերում, ինչպես նաև կրճատելու թափոնների վերամշակման ծախսերը:

Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագիր (ՀԸԳՀ)

Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագիրը ՀՀ և ԵՄ միջև ստորագրվել է 2017 թ. -ի նոյեմբերի 24-ին:²⁹

Ստորև ներկայացված են ՀԸԳՀ շրջանակում թափոնների կառավարման վերաբերյալ Հայաստանի ստանձնած պարտավորությունները, որոնք բերված են որպես թիրախներ՝ ենթակա իրականացման սահմանված ժամանակահատվածում.


- մինչև 2020 թ. -ը ունենալ հանրությանը բնապահպանական տեղեկություններ տրամադրող համակարգ,
- մինչև 2021 թ. -ը մշակել աղբավայրերում տեղադրվող կենսաքայքայվող կենցաղային թափոնների քանակի կրճատման ազգային ռազմավարություն,

²⁹ Ժամանակացույցին առնչվող հավելվածը մտնում է ուժի մեջ է մտնում ՀԸԳՀ-ի ստորագրման պահից՝ 2017 թ.-2017թ. -ի նոյեմբերի 24-ից և հասանելի է հետևյալ հղումով՝ https://eur-lex.europa.eu/resource.html?uri=cellar:60b9829d-a1f1-11e7-a56f-01aa75ed71a1_0015_02/DOC_2&format=PDF:

- մինչև 2021 թ. -ը սահմանել վերահսկողության և մշտադիտարկման ընթացակարգեր՝ աղբավայրերի շահագործման, փակման և հետագա խնամքի փուլերում,
- մինչև 2021 թ. -ը սահմանել դիմումների և թույլտվությունների համակարգ և թափոնների ընդունման (աղբավայրերում) ընթացակարգեր,
- մինչև 2022 թ. -ը մշակել թափոնների կառավարման պլաններ՝ թափոնների հիերարխիայի հինգ քայլերի և թափոնների կանխարգելման ծրագրերի համաձայն,
- մինչև 2023 թ. -ը սահմանել թափոնների հավաքում և փոխադրում իրականացնողների և գործողությունների ռեեստր,
- մինչև 2024 թ. -ը սահմանել ամբողջական ինքնաձայնագրված մեխանիզմ՝ համաձայն «աղտոտողը վճարում է» և «արտադրողի ընդլայնված պատասխանատվություն» սկզբունքների,
- մինչև 2024 թ. -ը սահմանել գոյություն ունեցող աղբավայրերի բարելավման պլաններ,
- մինչև 2024 թ. -ն ունենալ սահմանված համակարգ, որն ապահովում է համապատասխան թափոնի մշակումը՝ նախքան դրա տեղադրումն աղբավայրում,
- մինչև 2025 թ. -ը օպերատորների համար սահմանել պարտավորություններ՝ ձեռնարկելու անհրաժեշտ կանխարգելման և վերականգնման միջոցառումներ, ներառյալ պատասխանատվություն ծախսերի համար,
- մինչև 2025 թ. -ը խիստ պատասխանատվություն սահմանել վտանգավոր աշխատանքային գործողությունների համար:

Թափոնների հիերարխիա

Թափոնների հիերարխիայի որդեգրումը և կիրառումը պետք է առաջնահերթ ռազմավարական ուղղություն դառնան Հայաստանի պետական և տարածքային կառավարման, ինչպես նաև տեղական ինքնակառավարման մակարդակներում:



Պատկեր 2 - Թափոնների հնգաստիճան հիերարխիա

Թափոնների հիերարխիան (ստորակարգում) սահմանում է թափոնների նվազեցման և կառավարման քայլերի առաջնահերթությունը և սովորաբար ներկայացվում է բուրգի տեսքով (տե՛ս ստորև բերված պատկերը): Գլխավայր պատկերված բուրգը նշանակում է, որ քաղաքականության ամենանախընտրելի քայլը թափոնների գոյացման կանխարգելումն է: Հաջորդ նախընտրելի քայլը թափոնների գոյացման կրճատումն ու այն նվազագույնի հասցնելն է վերօգտագործման, նորոգման և վերօգտագործման համար այլ նախապատրաստական աշխատանքների միջոցով: Նյութերի և սննդանյութերի օգտահանումը (վերամշակումը և կոմպոստացումը) մյուս նախընտրելի գործողությունն է, որին հետևում են օգտահանման այլ տարբերակներին միտված քայլերը, ինչպիսիք են, օրինակ, թափոններից էներգիա կամ վառելիք ստանալը: Եթե էներգիան օգտահանվում է այնպիսի գործընթացների արդյունքում, ինչպիսիք են այրումը, պիրոլիզը կամ աղբավայրում գազի կորզումը, ապա այն նույնպես պատկանում է հիերարխիայի այս մակարդակին: Վերջին և ամենաքիչ ցանկալի տարբերակը թափոնների հեռացումն է այն պարագայում, երբ կանխումը, վերօգտագործումն ու օգտահանումն այլևս հնարավոր չեն: Հեռացումը կա՛մ թափոնների տեղադրումն է սանիտարական աղբավայրերում (ըստ անհրաժեշտության՝ պատշաճ նախամշակում իրականացնելուց հետո), կա՛մ դրանց կիզումը՝ առանց էներգիայի օգտահանման, կա՛մ այլ ապահով հեռացումը:


Ազգային օրենսդրություն և ԿԿԹ կառավարման տեղական պլանավորմանը ներկայացվող պահանջներ

Ազգային օրենսդրություն

Թափոնների վերաբերյալ ՀՀ օրենսդրությունը ներառում է տասնյակ օրենքներ³⁰ և թափոնների կառավարմանն առնչվող ենթաօրենսդրական ակտեր: Հայաստանը ստորագրել է թափոններին առնչվող ավելի քան 10 միջազգային պայմանագիր և համաձայնագիր: Ստորև բերված **Ошибка! Источник ссылки не найден.**-ը ներկայացնում է ՀՀ օրենսդրական դաշտի ընդհանուր կառուցվածքը: Սույն բաժինն անդրադառնում է ներպետական օրենսդրության ընդհանուր շրջանակին՝ նշելով միայն էական կարգավորումները: Ինստիտուցիոնալ շրջանակին վերաբերող 2.5 գլխում քննարկվում են առանցքային պետական մարմինների իրավասություններն ու լիազորությունները:

Թափոններին առնչվող օրենսդրության պարզեցումն ու արդիականացումը առաջնային նպատակ են եղել սկսած 2008 թ.-ից: Տարբեր օրենսդրությունների մոտարկումը, ինչպես նաև օրենսդրության կիրարկման ներդաշնակեցումը եվրոպական մակարդակում սահմանվել են որպես գործողությունների առաջնահերթ նպատակ, հատկապես այն պատճառով, որ մոտարկումը ներառում է օրենսդրությունը պարզեցնելու հնարավորություն:

³⁰ Հայաստանում թափոնների կառավարմանն առնչվող օրենսդրական ակտերի թարմացված ցանկը հասանելի է ՀԱՀ Ցակրբեան բնապահպանական կենտրոնի թափոնների ռեսուրսների շտեմարանում (<https://wrl-ace.aqa.am/hy/legislation>):



Պատկեր 3 - ՀՀ օրենսդրական շրջանակի կառուցվածքը
Աղբյուր՝ Սույն զեկույցի հեղինակների կողմից փարբեր աղբյուրներից հավաքված տվյալներ

Աղբահանության համակարգի 2021-2023 թթ. Ռազմավարությունը

ՀՀ կառավարության 2021 թ. ապրիլի 1-ի N 464 - Լ որոշման համաձայն հաստատվել է Հայաստանում աղբահանության համակարգի ռազմավարությունը և ռազմավարության կիրարկումն ապահովող 2021-2023 թվականների միջոցառումների ծրագիրը:³¹ Ռազմավարությունը սահմանում է աղբահանության կայուն համակարգի զարգացման ստորև ներկայացված գերակայություններն ու ուղղությունները: Դրանցից մի քանիսը (6-11) բխում են վերը քաննարկված թափոնների հիերարխիայի սկզբնականներից:

- 1) աղբահանության և սանիտարական մաքրման ծառայությունների բարելավումը.
- 2) աղբահանության և սանիտարական մաքրման արդյունավետ սխեմաների ներդրումը.
- 3) աղբահանության ծառայություն մատուցող-սպառող հարաբերությունների կարգավորումը.
- 4) աղբահանության ծառայությունների որակի գնահատման մեխանիզմների ներդրումը.
- 5) հանրապետության տարածքում աղբի պատշաճ հավաքման, տեղափոխման ու հեռացման, ինչպես նաև աղբավայրերի շահագործման նպատակով համապատասխան հագեցվածությամբ մասնագիտացված կազմակերպությունների ներգրավումը.
- 6) շրջանաձև տնտեսության գործիքների կիրառումը.
- 7) գոյացող աղբի քանակի կրճատումը սկզբնաղբյուրում.

³¹ Որոշումը, ռազմավարությունը և դրա կիրարկումն ապահովող միջոցառումների ծրագիրը հասանելի է հետևյալ հղումով՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=151384>

- 8) կրկնակի օգտագործման կամ վերաօգտագործման, վերամշակման, վերականգնման և օգտահանման ենթակա թափոնների տեսակավորված հավաքման մեխանիզմների ներդրումը.
- 9) աղբի վերաօգտագործման, վերամշակման, օգտահանման և էներգիայի վերականգնման գործողությունների կիրառումը և դեպի աղբավայր հեռացվող թափոնների քանակի կրճատումը
- 10) աղբավայրում տեղադրվող կենսաբանական քայքայման ենթակա թափոնների քանակի նվազեցումը.
- 11) աղբի տեսակավորված հավաքման և դրանց կրկնակի օգտագործման կամ վերաօգտագործման, վերամշակման, օգտահանման և վերականգնման համար խթանիչ մեխանիզմների կիրառումը:

ԿԿԹ կառավարման տեղական պլանավորմանը ներկայացվող պահանջներ

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2015 թ. դեկտեմբերի 6-ի փոփոխություններով) 9-րդ գլուխը նվիրված է տեղական ինքնակառավարմանը, որի 179-րդ հոդվածի 2-րդ կետը, սահմանում է, որ «Տեղական ինքնակառավարումն իրականացվում է համայնքներում և որ տեղական ինքնակառավարումը տեղական ինքնակառավարման մարմինների իրավունքն ու կարողությունն է՝ համայնքի բնակիչների շահերից ելնելով, Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան, սեփական պատասխանատվությամբ լուծելու համայնքային նշանակության հանրային հարցերը»:

Սկզբունքորեն ՏԻՄ մարմիններն իրավունք ունեն անելու այն, ինչ բխում է իրենց համայնքի բնակիչների շահերից և արգելված չէ օրենքով: «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝

- համայնքի պարտադիր խնդիրներից են «... համայնքի աղբահանությունը և սանիտարական մաքրումը, կոմունալ տնտեսության աշխատանքների ապահովումը...»
- համայնքի ավագանին «...իրականացնում է «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված լիազորություններ».
- համայնքի ղեկավարը «...կազմակերպում է աղբահանությունը և սանիտարական մաքրումը, ինչպես նաև իրականացնում է «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված այլ լիազորություններ»:

ԿԿԹ կառավարման տեղական պլանի մշակմանը ներկայացվող առանձին իմպերատիվ իրավական պահանջներ ամրագրված չեն ՀՀ օրենսդրությամբ, այդ իսկ պատճառով համայնքները հիմնականում չունեն աղբի/աղբահանության կառավարման ռազմավարական պլաններ: Չնայած դրանց մշակման և համայնքի ավագանու կողմից ընդունման մի քանի հաջողված փորձեր եղել են միջազգային կազմակերպությունների դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում, այնուամենայնիվ, դրանք մնացել են թղթի վրա և գրեթե չեն կիրառվում:

Անգամ ներկա իրավակարգավորումներով՝ համայնքներն իրավունք ունեն և կարող են ունենալ ԿԿԹ կառավարման տեղական ռազմավարական պլաններ, սակայն առաջնորդվում են այն սկզբունքով, որ չկա դրանք ունենալու իմպերատիվ պահանջ, և ինքնակամ չեն ձեռնարկում կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ ռազմավարական պլանավորում իրականացնելու քայլեր:

Ինստիտուցիոնալ կառուցակարգ, ազգային, տարածքային և տեղական կառավարման մարմինների դերը

Թափոնների կառավարման և աղբահանության ոլորտը կարգավորող ՀՀ գործող օրենսդրությունը խիստ կարիք ունի վերանայման. մասնավորապես պետք է հստակեցնել բոլոր սուբյեկտների լիազորությունների իրավական սահմանները՝ հիմք ընդունելով ԵՄ լավագույն փորձը և ՀՀ միջազգային պայմանագրերով ստանձնած պարտավորություններից բխող պահանջները:

Իրականում «Թափոնների մասին» և «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» երկու առանձին օրենքներում ոլորտի հասկացություններ սահմանելը և համանման հարաբերություններ կարգավորելը իրավական անհստակություն է ստեղծում, որը դժվարացնում է իրավական նորմերի պատշաճ կիրառումն ու պաշտպանությունը:

«Թափոնների մասին» ՀՀ օրենքում թեև փորձ է արված սահմանելու պետական և տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների շրջանակները թափոնների կառավարման, աղբահանության և սանիտարական մաքրման ծառայությունների մատուցման բնագավառում, այն է՝ սահմանելու և տարանջատելու թափոնների հետ կատարվող կոնկրետ գործողությունները (օրինակ՝ թափոնների հավաքում, պահում, օգտագործում, մշակում, օգտահանում, հեռացում, վնասագերծում, տեղադրում, թաղում, փոխադրում և այլն), ինչպես նաև թափոնների գործածության ոլորտում պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների իրավասությունները, այնուամենայնիվ, ազգային, տարածքային և տեղական ինքնակառավարման մարմինների դերը հստակեցնելու և առարկայացնելու կարիք ունի:

«Թափոնների մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածը սահմանում է տեղական ինքնակառավարման մարմինների իրավասությունները համայնքի վարչական սահմաններում թափոնների գործածության ոլորտում.

Տեղական կարգավորումներ

Ոլորտի կարգավորման ներկա ժամանակաշրջանի³² խնդրահարույց հարցերից մեկն այն է, որ հստակ սահմանված չէ աղբահանության ծառայության նկարագրությունը և հիմնավորված կամ տարբերակված չէ դրան համապատասխան վճարվելիք տեղական վճարի չափը (սահմանված գինը)՝ ըստ մատուցվող ծառայության տեսակի և որակի:

Համայնքներում չեն տարանջատվում աղբահանության և սանիտարական մաքրման տարածքներն ու ծառայության շրջանակը, հետևաբար դժվար է տարանջատել համայնքային բյուջեի ծախսերն ըստ այդ ծառայությունների, հատկապես այն դեպքերում, երբ աղբահանության ծառայությունն իրականացվում է ՀՈԱԿ-ների կողմից:

«Տեղական ինքնակառավարման մասին» օրենքով պահանջվում է, որ համայնքի ավագանին հաստատի համայնքի սանիտարական մաքրման սխեման, սակայն իրավական տեսանկյունից ճիշտ կլինի սահմանել, որ համայնքի ավագանին պարտավոր է հաստատել աղբահանության կառավարման ռազմավարական պլանը, որի անբաժանելի մասը կլինի սանիտարական մաքրման սխեման:³³

ԿԿԹ տեղական կառավարման պլանավորման կարևորությունը

ԿԿԹ կառավարման ազգային ռազմավարության նպատակների իրականացումը մեծապես կախված է տեղական մակարդակում թափոնների կառավարումից: Օրինակ՝ աղբավայր հեռացվող թափոնների քանակի կրճատման կամ օգտահանվող թափոնների քանակի ավելացման ազգային թիրախներին հասնելը կախված է տեղական մակարդակում տեսակավորված հավաքման պլանավորումից և դրա իրականացումից: Վերջինս հաճախ բախվում է մի շարք խնդիրների: Հայտնի է, որ տեսակավորված հավաքման արդյունավետությունն ուղղակիորեն կապված է բնակչության վարքագծից, ուստի պլանավորման անբաժանելի մաս պետք է կազմեն իրազեկության բարձրացման ծրագրերը և ՏԻՄ-երի կողմից համայնքի հետ տարվող այլ աշխատանքներ: ԿԿԹ տեղական կառավարման այլ մարտահրավերներից է ճշգրիտ տվյալներ հավաքելը, որը կարևոր դեր ունի պլանավորման գործում, ուստի և ՏԻՄ-երը պետք է պլանավորման մեջ ներառեն նաև անհրաժեշտ տվյալների հավաքման մեխանիզմների կիրառումը:

Ընդհանրապես պլանավորումն անհրաժեշտ է շրջակա միջավայրի պահպանությանն ուղղված բնակչության պահանջին համահունչ գործելու համար: Համայնքային իշխանություններն ու ծառայություններ մատուցողները, հաճախ զբաղված լինելով իրենց առօրյա գործունեությամբ, ուշադրություն չեն դարձնում ոլորտի միջնաժամկետ և երկարաժամկետ զարգացմանը: Կարևոր է նշել, որ հատկապես հնգամյա զարգացման ծրագրերում տեղ գտած աղբահանության պլանավորումը սովորաբար անդրադարձել է միայն աղբի հավաքմանն ու աղբավայր հեռացման հարցերին՝ դուրս թողնելով թափոնների կայուն կառավարման

³² Իրավական կարգավորումները վերլուծված են 2021 թվականի մարտի դրությամբ:

այնպիսի բաղադրիչներ, ինչպիսիք են, օրինակ, տեսակավորված հավաքումը և օգտահանումը, վտանգավոր թափոնների կառավարումը և այլն:

Պլանավորման գործընթացում հանրային մասնակցությունը

ԿԿԹ տեղական կառավարումը պատշաճ պլանավորելու համար համայնքն ապահովել է բնակչության և այլ շահառուների մասնակցությունը:

ԵՄ 2001/42/EC դիրեկտիվի³⁴ համաձայն՝ հանրության ներգրավումը պարտադիր պահանջ է բնապահպանական ռազմավարական գնահատման համար, որի մեջ մտնում է նաև թափոնների կառավարումը: Այն համահունչ է նաև Օրհուսի կոնվենցիային,³⁵ որի պահանջներից է համայնքի բնակչությանը և հասարակական կազմակերպությունների սեկտորին աստիճանաբար մասնակից դարձնել շրջակա միջավայրի պահպանությանն ուղղված համայնքային նշանակության իրավական ակտերի մշակման գործընթացին:

ԿԿԹ տեղական կառավարման պլանի մշակմանը նախորդել են բազմաշահառու կողմերի հետ համայնքային ժողովների և աշխատանքային խմբերի ձևաչափով մի շարք քննարկումներ, որոնց նպատակն է եղել բացահայտել ԿԿԹ տեղական կառավարման հիմնախնդիրները, սահմանել առաջնահերթություններ, կատարել ուժեղ և թույլ կողմերի վերլուծություն (SWOT analysis), մշակել և ձևակերպել Պլանավորման տարածքում ԿԿԹ կառավարման տեսլականը և նպատակները:

Տվյալների հավաքագրման պահանջներ և ստանդարտներ

Արդյունավետ ռազմավարական պլանավորումը գրեթե անհնար է առանց հավաստի տվյալների առկայության, ուստի դրանց հավաքումը պլանավորման անբաժանելի մասն է: Որքան շատ և որքան հավաստի ու ճշգրիտ են մուտքագրվող տվյալները, այնքան ավելի ամփոփ և լիարժեք է հնարավոր նկարագրել և գնահատել առկա իրավիճակը, որը, ինչպես նշվել է, ԿԿԹ տեղական կառավարման պլանի երկու հիմնական բաղադրիչներից է: Հավաստի ու ճշգրիտ տվյալներ հավաքելն ամենևին հեշտ աշխատանք չէ, հատկապես երբ դա արվում է առաջին անգամ: Կարևոր է ստեղծել տվյալների հավաքի՝ արդյունավետ, հարատև ու կայուն մեխանիզմներ թե՛ ազգային, թե՛ համայնքային մակարդակով:

Պլանավորման համար թերևս ամենակարևոր տվյալներից մեկն է համայնքում գոյացող թափոնների քանակը՝ արտահայտված ըստ համայնքի (մարզի կամ երկրի) կամ մեկ շնչի՝ միավոր ժամանակահատվածում առաջացրած թափոնների զանգվածով: Օրինակ՝ Երևան քաղաքում 2019 թվականին գոյացել է մոտ 330 հազար տոննա կոշտ կենցաղային թափոն: Մեկ շնչի հաշվով ԿԿԹ գոյացման ցուցանիշը նույն տարվա համար կարտահայտվի որպես 325 կգ/տարի կամ 0.9 կգ/օր: Այս ցուցանիշները ճշգրիտ հաշվարկելու համար անհրաժեշտ են կայուն մեխանիզմներ, մասնավորապես՝ համայնքում աղբահավաք ընկերությունների և հասանելի թափոնների կշռման ենթակառուցվածք ինչպես համայնքային աղբավայրում, այնպես էլ տեսակավորման կամ օգտահանման կայանքներում, եթե առկա են: Հակառակ դեպքում, այդ ցուցանիշը

³⁴ Դիրեկտիվը հասանելի է հետևյալ հղումով՝ <https://eur-lex.europa.eu/eli/dir/2001/42/oj>

³⁵ Օրհուսի կոնվենցիան հասանելի է հետևյալ հղումով՝ <https://ec.europa.eu/environment/aarhus/>

կլինի միայն մոտարկման արդյունք, որը պիտանի չի լինի, օրինակ, 3 տարվա կտվածքով համայնքում թափոնների գոյացման փոփոխությունները արձանագրելու համար:

Համայնքային աղբավայրերում տեղադրվող թափոնների քանակը մեկ այլ կարևոր ցուցանիշ է, որի մասին հավաստի և ճշգրիտ տվյալների հավաքն, ինչպես նշվեց, հնարավոր է միայն աղբավայրերում անցակետերի, կշեռքների և տարրական վերահսկողության առկայության պարագայում: Ճիշտ է՝ այլընտրանքային աղբյուր կարող է լինել համայնքից հավաքված թափոնները աղբավայր հեռացնող աղբատարների թիվը, սակայն ակնհայտ է, որ այդ դեպքում տվյալները ճշգրիտ չեն լինի, քանի որ քաշը հաշվարկվելու է ըստ աղբատարի ծավալի՝ ընդունված խտության գործակցով (օր. 0.5 տ/մ³), որը գրեթե միշտ տարբեր է: Վերջին դեպքում նաև հաշվի չեն առնվի խնդրո առարկա աղբավայրում անվերահսկելի ձևով տեղադրվող աղբի քանակները:

Մեկ այլ առանցքային ցուցանիշ է համայնքում գոյացող աղբի բաղադրությունը, որի ճշգրիտ գնահատումը հնարավոր է միայն հստակ մեթոդաբանությամբ և պարբերականությամբ արվող նմուշառման և վերլուծության պարագայում:

2000 թ.-ից Հայաստանում իրականացված ութ ծրագրերը ներառել են թափոնների քանակի և բաղադրության վերլուծություն՝ որպես ծրագրի մաս կամ դրա հիմնական նպատակ: Դրանք բոլորն իրականացվել են տարբեր մեթոդաբանությունների կիրառմամբ, երկրի տարբեր հատվածներում և տարբեր սեզոնների ընթացքում, ուստի և արդյունքները միմյանց հետ համադրելի չեն:³⁶

Ամենավերջին վերլուծությունն իրականացվել է 2019 թ.-ի ամռանը Հայաստանի ամերիկյան համալսարանի (ՀԱՀ) Յակոբեան բնապահպանական կենտրոնի կողմից Հայաստանի կառավարության հետ համագործակցությամբ՝ «Թափոնների քանակի և բաղադրության ուսումնասիրություն» ծրագրի շրջանակում: Կոշտ կենցաղային թափոնների փորձանմուշներ են վերցվել 6 համայնքներում (Երևան, Արարատ, Կապան, Հրազդան, Գյումրի և Վանաձոր)՝ նպատակ ունենալով ձեռք բերելու ներկայացուցչական ընտրանք ողջ երկրի համար: Թեստերի իրականացման համար կիրառվել է ԵՄ-ում օգտագործվող (մասնավորապես Շվեդիայում) մեթոդաբանություն, որը հարմարեցվել է հայկական համատեքստին:³⁷

³⁶ ՀԱՀ Յակոբեան բնապահպանական կենտրոն (2020). ԹԱՓՈՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ. Հայաստանի ամերիկյան համալսարան և «LIFE» հիմնադրամ: Ծրագրի կայքէջ՝ <https://ace.aua.am/hy/waste/governance/>:

³⁷ Հայաստանի Հանրապետության թափոնների քանակի և բաղադրության վերլուծություն, Երևան. ՀԱՀ Յակոբեան բնապահպանական կենտրոն և ՀԱՀ «Մանուկյան Սիմոն» հետազոտական հիմնադրամ, «LL Bolagen», (2020): Ծրագրի կայքէջ՝ <https://ace.aua.am/hy/waste/composition/>:

ՀԱՎԵԼՎԱԾ Գ - Խառը չտեսակավորված կոշտ կենցաղային թափոններում սովորաբար պարունակվող վտանգավոր թափոնների ոչ ամփոփ ցանկ

Մշտական և ժամանակավոր բնակության վայրերից առաջացած չտեսակավորված թափոններ (բացառությամբ խոշոր եզրաչափերի)
Կազմակերպությունների կենցաղային տարածքներից առաջացած չտեսակավորված աղբ (բացառությամբ խոշոր եզրաչափերի)
Աղտոտված ապակե ջարդոն
Աղտոտված տեքստիլի այլ թափոններ
Ասբեստե թղթի և ասբեստի փշրանքի թափոններ
Բազալտի գերնուրբ թելքի թափոններ
Բամբակի խարամի թափոններ
Բանեցված պեռլիտ (ֆիլտր, փոշի)
Բժշկական ասեղներ՝ փչացած կամ օգտագործված
Գործածված միանվագ ներարկիչներ
Էլեկտրական լամպեր
Էլեկտրական և էլեկտրոնային սարքեր
Թղթե սունձաժապավենի թափոններ
Թղթի և սովորաբար տարատեսակ թափոններ (օրինակ՝ ֆոտոթուղթ պարունակող թափոններ)
Ժամկետանց հիգիենիկ միջոցներ
Ժամկետանց մթերք ապակե և մետաղական տարաներում
Ժամկետանց պահածոներ ապակե և մետաղական տարաներում
Ժամկետանց սննդամթերք
Լաքաներկանյութերի թափոններ
Լաքապատված թղթե թափոններ
Լուծիչներ կամ ծանր մետաղներ պարունակող հին լաքեր և ներկեր, ինչպես նաև տակառներում չորացած մնացորդներ
Լուսավորության սարքեր
Խեժերի, մածիկների, սունձող նյութերի, սոսինձների թափոններ
Կոսմետիկ պարագաներ
Կտորների տեսքով ասբեստի թափոններ
Մաքրող հեղուկի մնացորդ պարունակող տարաներ
Մոխիր
Յուղոտված կանեփաթել (յուղերի պարունակությունը՝ 15%-ից պակաս)
Նատրիումի աղերի բարձր քանակությամբ սննդամթերք
Շենքերի քանդումից առաջացած շինարարական աղբ
Շինարարության փայտանյութի թափոններ՝ այդ թվում՝ շինությունների քանդելուց և մասնատելուց առաջացած
Պահածոյացված և ստեղծված մթերքի մնացորդներ (միս, ձուկ)
Պահածոյացված և ստեղծված մթերքի մնացորդներ (միրգ, բանջարեղեն)
Պատի բետոնե իրեր, սյուներ, փչացած և աղտոտված բետոնային սալիկ
Պնդացած հին լաքեր, ներկեր, ինչպես նաև պնդացած մնացորդներ տակառներում և տարողություններում
Ռենտգենի, ֆոտո և կինոժապավենների թափոններ

Ռեզիլիենտության թափոններ (այդ թվում՝ բանեցված իրեր և խոտան)
Սոսնձով աղտոտված մաքրման նյութեր
Վնասակար (վտանգավոր) սննդային հավելվածներ կամ ներկանյութեր պարունակող սննդամթերք
Տաքացնող և այրող սարքավորումների բեկորներ
Տոլի թափոններ
Փայտի թափոններ՝ ներծծված յուղերով (սյուներ, կայմեր)
Փչացած կամ օգտագործված դեղագործական տարաներ
Փչացած, աղտոտված կամ չմակնշված սննդամթերք
Քիմիական արտադրանքներ և գազեր՝ բարձր ճնշման բալոններում տեխնիկական աերոզոլային բեռնարկներում (փչացած, վնասված կամ այլ կերպ իրենց պաշտպանիչ հատկությունները կորցրած)
Օգտագործված գազայրիչներ
Օգտագործված մարտկոցներ
Ֆոտոթղթի թափոններ

ՀԱՎԵԼՎԱԾ Դ - Օգտակար նյութեր

Վերը քննարկված ձևանմուշները և պլանավորման այլ գործիքներ (օր.՝ ինքնարժեքի հաշվարկի գործիքը) հասանելի կլինեն հետևյալ կայքէջում՝ https://ace.aua.am/hy/waste/planning_guidelines/deliverables/:

Ստորև ներկայացված են քննարկված և չքննարկված այլ կարևոր նյութերի հղումներ:

2.9 Ռազմավարություններ և զեկույցներ

- i. ՀՀ Կառավարության ծրագիր, 2019 թ.
Հասանելի է՝ <https://www.gov.am/files/docs/3133.pdf/>
- ii. ՀՀ 2017-2036 թվականների կոչոյ կենցաղային թափոնների կառավարման համակարգի զարգացման ռազմավարություն
Հասանելի է՝ <http://www.mtad.am/files/docs/1552.pdf/>
- iii. Արտադրատեսակների համար արտադրողի (ներմուծողի) պարասխանաարվության ընդլայնման (ԱՊԸ) համակարգերի ներդրման ռազմավարություն
Հասանելի է՝ <http://www.irtek.am/views/act.aspx?aid=94848/>
- iv. Մաքուր արտադրության հայեցակարգ
Հասանելի է՝ <http://www.irtek.am/views/act.aspx?aid=64672/>
- v. ՀՀ գյուղի և գյուղատնտեսության 2010-2020 թվականների կայուն զարգացման ռազմավարություն
Հասանելի է՝ http://old.minagro.am/public/uploads/2014/02/agstrategy_arm3.pdf
- vi. Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի (ՀԸԳՀ) ճանապարհային քարտեզ
Հասանելի է՝ https://www.arlis.am/Annexes/5/Lokal_2019N666.1v..doc
- vii. ՀՀ Վիճակագրական կոմիտե, Թափոնների կառավարումը ՀՀ-ում, 2019 թ.
Հասանելի է՝ https://www.armstat.am/file/article/eco_book_2019_10.pdf
- viii. ՀՀ Վիճակագրական կոմիտե, Բնապահպանական հարկերը և բնօգտագործման վճարները ՀՀ-ում, 2019 թ.
Հասանելի է՝ https://www.armstat.am/file/article/eco_book_2019_13.pdf
- ix. ՀՀ Վիճակագրական կոմիտե, Շրջակա միջավայրը և բնական պաշարները ՀՀ-ում, 2019 թ.
Հասանելի է՝ <https://www.armstat.am/am/?nid=82&id=2301>
- x. Bolagen, Թափոնների քանակի և բաղադրության ուսումնասիրություն, ՏԿԵՆ, ՀԱՀ Յակոբեան բնապահպանական կենտրոն, 2019
Հասանելի է՝ <https://ace.aua.am/hy/waste/composition/report/>
- xi. ՀԱՀ Յակոբեան բնապահպանական կենտրոն: ԹԱՓՈՆՆԵՐԻ ԿԱՌՎԱՐՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ: Հայաստանի ամերիկյան համալսարան և «LIFE» հիմնադրամ, 2020 թ.
Հասանելի է՝ <https://ace.aua.am/hy/waste/governance/report>

2.10 Ձեռնարկներ և ուղեցույցներ

- xii. ՀՀ ՏԿԵՆ, 2020 թ. ՄԱՄՆԱԿՑԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՎԱՐՈՒՄ (ՁԵՌՆԱՐԿ)
Հասանելի է՝ <http://www.mtad.am/files/docs/2816.pdf>
- xiii. Սիսիանի մեծահասակների կրթության կենտրոն, մասնակցային բյուջեփորձման իրականացման անհրաժեշտ ձևաթղթեր (մեթոդաբանություն, աշխատակարգ, ուղեցույց և այլն)
Հասանելի է՝ https://pbudgeting.am/?page_id=702
- xiv. ԱՄՆ ՄԶԳ/Ուրբան հիմնադրամ, ՈւՂԵՅՈՒՅՑ քաղաքների ջրային ոլորտի հիմնախնդիրների բացահայտման, ըստ առաջանախերթության դասակարգման և ծրագրերի մշակման մասնակցային գործընթացի, 2017 թ.
Հասանելի է՝ <https://urbanfoundation.am/wp-content/uploads/2021/03/Participatory-Project-Development-Guide-Arm-Final-1.doc/>

ՀԱՎԵԼՎԱԾ Ե - ԿԹ տեղական կառավարման պլանի իրագործման հաշվետվության ձև

Սույն հաշվետվությունը ներկայացվում է լիազոր մարմին պլանավորման ժամանակաշրջանի 2-րդ և 4-րդ տարվա ավարտին:

2.11 Հաշվետվության ամփոփագիր

Հաշվետվության ամփոփագրից առաջ ներկայացվում են հետևյալ ընդհանուր տեղեկությունները.

	օրինակ
Հաշվետվության անվանում	ՎԱՐԴԱՇԵՆ ՔԱՂԱՔՈՒՄ ԿՈՇՏ ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ԹԱՓՈՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ 2021-2025 թթ.ՊԼԱՆԻ ԿԱՐՃԱԺԱՄԿԵՏ (կամ միջնաժամկետ) ԻՐԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ 2021-2022 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ
Պլանավորման մեջ ընդգրկված քաղաք(ներ)	Վարդաշեն
Հաշվետվության տեսակ	Կարճաժամկետ
Հաշվետվության տեսակ և ժամանակաշրջան	Կարճաժամկետ, 2021-2022 թթ.
Հաշվետվությունը կազմող անձանց անուն, ազգանուն, պաշտոն	
Հաշվետվությունը կազմող անձանց էլ. հասցե	
Հաշվետվության առարկա հանդիսացող Պլանի էլեկտրոնային տարբերակը ներբեռնելու էլ. հասցե	

Ամփոփագրում պետք է նշվեն Պլանավորման տարածքին վերաբերող բոլոր ռազմավարական փաստաթղթերը (զարգացման պլան և այլն), որոնց հետ ներկայացվող ԿԹ տեղական կառավարման պլանը որևէ կապի ունի: Պետք է նաև նշվի՝ արդյոք ներկայացվող պլանը ներառում է թափոնների կրճատման ծրագիր, թե վերջինս նախատեսվում է առանձին:

2.12 Սահմանված նպատակների և թիրախների իրագործումը

Այս բաժնում նկարագրվում է, թե ինչպես և որքանով (%) են իրագործվել հաշվետվության առարկա հանդիսացող Պլանում սահմանված նպատակները և թիրախները, որոնք պետք է գնահատել՝ ըստ բերված գունային սխեմայի: Քանի որ հաշվետվությունը կարող է տրվել կարճաժամկետ կամ ժամանակաշրջանի համար, ապա պետք է օգտվել հաշվետվության առարկա հանդիսացող Պլանի համապատասխան աղյուսակից և հաշվետվության (ստորև բերված) աղյուսակում նշել համապատասխան ժամանակաշրջանը:

Պլանում սահմանված կարճաժամկետ նպատակն իրագործված է:

Պլանում սահմանված կարճաժամկետ նպատակն իրագործված չէ:

#	Թափոնի հիմնական կամ երկրորդական հոսք	Պլանավորման ժամանակաշրջանում առաջնա հերթության աստիճան (շատ կարևոր, միջին կարևորության, քիչ կարևոր)	Պլանավորման ժամանակաշրջանում թափոնների ակնկալվող գոյացում մեկ շնչի հաշվով (կգ/տարի մեկ շնչի հաշվով)	Պլանավորման ժամանակաշրջանում թափոնների ակնկալվող գոյացում՝ ըստ տարեկան ընդհանուր քանակի (հազ. տ/տարի)	Կոշտ թափոնների գործածության կարճաժամկետ (կամ միջնաժամկետ) թիրախներ և դրանց հասնելու կարողությունների հասանելիություն 2021-2022 թթ. պլանավորման ժամանակաշրջանում											Նշումներ
					I	II	III	IV	V	VI	VII	VII	IX	X	XI	
					Տեսակավորված հավաք (% ընդհանուր գոյացած քանակից)	Հավաք (խառը և տեսակավորված) (% ընդհանուր քանակից)	Վերօգտագործում (% ընդհանուր գոյացած քանակից)	Վերակիրառում (% ընդհանուր գոյացած քանակից)	Նյութի օգտահանում (վերամշակում) (% ընդհանուր գոյացած քանակից)	Սննդանյութի օգտահանում (կոմպոստացում) (% ընդհանուր գոյացած քանակից)	Էներգիայի օգտահանում վառելիքի տեսքով (կենսաբազ, բրիկետ, բիոդիզել, RDF) (% ընդհանուր գոյացած քանակից)	Էներգիայի օգտահանում (աղբակիզում, ինսիներացում) (% ընդհանուր գոյացած քանակից)	Մշակում (վտանգավոր թափոնների չեզոքացում, վնասագերծում) (% ընդհանուր գոյացած քանակից)	Տեղադրում ոչ սանիտարական աղբավայրում (% ընդհանուր գոյացած քանակից)	Տեղադրում աղբավայրերում (ներառյալ սանիտարական) (% ընդհանուր գոյացած քանակից)	
7	Կոշտ կենցաղային թափոններ															
	A. Օրգանական															
	B. Թուղթ և ստվարաթուղթ															
	C. Պլաստիկ															
	D. Ապակի															
2	Խոշոր եզրաչափերի թափոններ															
3	Փաթեթավորում և փաթեթվածք															
4	ԷԷՍ (Էլեկտրական և էլեկտրոնային սարքեր)															
5	Վտանգավոր թափոններ (բացի ԷԷՍ թափոններից)															
6	Անվաղողեր															
7	Շ/Ք թափոններ															

Աղյուսակ 44 – Հաշվերու ժամանակաշրջանում սահմանված նպատակների և թիրախների իրագործումը

2.13 Թերի իրագործված նպատակների վերլուծություն

Այս բաժնում պետք է վերլուծվեն այն նպատակներն ու թիրախները, որոնց իրագործումը չի հաջողվել հաշվետվության ժամանակաշրջանում: Վերլուծությունը հիմնականում վերաբերում է պատճառներին և հետագա գործողություններին: Վերանայվում են նաև ընթացիկ պլանում ամրագրված թիրախների և նպատակների իրագործման համար անհրաժեշտ կարողությունների կարիքները:

#	Չիրագործված նպատակի անվանում	Պլանավորված թիրախ	Փաստացի իրագործման չափը	Թերի իրագործման պատճառ(ներ)	Հետագա գործողություններ (պատճառները վերացնելուն ուղղված միջոցառումներ կամ թիրախը վերանայելու անհրաժեշտության հիմնավորում)	Նշումներ
1	(օր. Կոշիկ կենցաղային թափոնների հավաք՝ խառը և տեսակավորված) (% ընդհանուր բնակչությունից)	100%	90%	Պատճառ 1 Պատճառ 2 ...		
2	(օր. Բ. Թուղթ և սրվարաթուղթ թափոնների տեսակավորված հավաք)	20%	5%	Պատճառ 1 Պատճառ 2 ...		
3						
4						
5						

Աղյուսակ 45 - Հաշվետու ժամանակաշրջանում թերի իրագործված նպատակների վերլուծություն

2.14 ԿԹ կառավարման ընթացիկ պլանում փոփոխումների անհրաժեշտության վերլուծություն

Սույն բաժնում պետք է նկարագրվեն ընթացիկ պլանում փոփոխման ենթակա կետերը վերջիններիս հիմնավորման հետ մեկտեղ:

ՀԱՎԵԼՎԱԾ Զ – ԿԹ տեղական կառավարման պլանավորման համար անհրաժեշտ որոշ ելակետային տվյալներ

2.15 Աղբի գոյացում

Ստորև բերված աղյուսակում ներկայացված են ՀՀ Վիճակագրական կոմիտեի հրապարակած տվյալները: Աղբյուր՝ Շրջակա միջավայրը և բնական պաշարները ՀՀ-ում, 2019 թ., հասանելի է հետևյալ հղումով՝ https://www.armstat.am/file/article/eco_book_2019_10.pdf:

Տարի	2015	2016	2017	2018	2019
Թափոնների քանակը, հազ. տ	47 831.3	55 661.1	60 116.4	67 616.1	67 890.8
Թափոնների քանակը մեկ շնչի հաշվով, տ	15.9	18.6	20.2	22.8	22.9
Թափոնների քանակը մեկ կմ ² հաշվով, տ	1 680.3	1 955.3	2 111.9	2 375.0	2 385.2
Քաղաքային թափոնների քանակը բնակչության մեկ շնչի հաշվով, կգ	164.0	167.0	165.8	158.3	159.6
Քաղաքային թափոնների առաջացումը մեկ քաղաքային բնակչի հաշվով, կգ	249.3	259.2	257.1	237.1	245.5


Աղյուսակ 46 - Տարվա ընթացքում առաջացած թափոնների հիմնական ցուցանիշները, 2015-2019 թթ. ՀՀ Վիճակագրական կոմիտե

Ստորև բերված աղյուսակում ներկայացված է մեկ բնակչի հաշվով ԿԿԹ-ների գոյացումը՝ համաձայն 2019 թվականին «Բոլագեն» շվեդական խորհրդատվական ընկերության կողմից արված ուսումնասիրության:


Քաղաք/մարզ	Թափոնի քանակ (կգ/մ, տ)	Աղբահանության ծածկույթ (%)	Թափոնի ճշգրտված քանակ (կգ/մ, տ)
Երևան	287	100	287
Մարզեր	85	70	121
Ընդհանուր			196

2.16 Թափոնների բաղադրություն

Ստորև ներկայացված են 2019 թվականին «Բոլագեն» շվեդական խորհրդատվական ընկերության կողմից Հայաստանում արված կոշտ կենցաղային թափոնների բաղադրության վերլուծության (ԹԲՎ) արդյունքները՝ ըստ տարբեր հոսքերի, բաժնեմասերի և աշխարհագրական վայրերի:




Պատկեր 4 - Թափոնների բաղադրությունը Երևանում՝ ըստ քաշի և բաժնեմասի




Պատկեր 5 - Վեց քաղաքներում իրականացված թեստերի ԹԲՎ արդյունքների համեմատություն՝ ըստ տնային տնտեսություններից ստացված հիմնական բաժնեմասերի³⁸


³⁸ Բարձր խտություն ունեցող բնակելի տարածքներից և բարձրահարկ բազմաբնակարան շենքերի աղբամուղներից կամ աղբարկղերից հավաքված թափոններ:



Պատկեր 6 - ԹԲՎ արդյունքների համեմատություն՝ ըստ վեց քաղաքների մայթեզերի աղբարկղերի թափոնների հիմնական բաժնեմասերի



Պատկեր 7 - ԹԲՎ արդյունքների համեմատություն՝ ըստ երեք քաղաքներում առևտրային տարածքների հիմնական բաժնեմասերի



Պատկեր 8 - Յուրաքանչյուր հիմնական հոսքի (ներսի շրջան) և երկրորդային հոսքի (դրսի շրջան) միջին մասնաբաժինը ամբողջ հանրապետության համար:

2.16.1 ՎԱՆԱՃՈՐ ԹԵՍ 1

Ամսաթիվ	19 հունիս, 2019թ.	Մայր նմուշի քաշ (կգ)					6,130		
Վերլուծության տարածք	Վանաձոր								
Ենթատարածք	Բնակելի/տնային տնտեսություններ								
Հիմնական ֆրակցիա	Երկրորդային ֆրակցիա	Ենթանմուշ 1	Ենթանմուշ 2	Ենթանմուշ 3	Ենթանմուշ 4	Ենթանմուշ 5	Միջին քաշ	Ստանդարտ շեղում	Ֆրակցիա %
		կգ	կգ	կգ	կգ	կգ			
Օրգանական	Խոհանոցային թափոն	56.86	63.96	57.20	55.40	63.25	59.33	3.55	60.32
	Այգու թափոն	2.92	1.3	1.46	1.3	1.76	1.75	0.61	1.78
	Այլ կենսաքայքայվող	1.52	0	0	0.35	0.47	0.47	0.56	0.48
Թուղթ և սովարաթ ուղթ	Թերթ և տպագիր նյութ	0.9	0.26	9.6	0.18	2.15	2.62	3.56	2.66
	Ծաքավոր սովարաթ ուղթ	0.54	1.65	2.15	2.38	1.3	1.60	0.65	1.63
	Թղթ ե փաթ եթ ներ	1.6	0.62	0.5	0.4	0.6	0.74	0.44	0.76
	Այլ թ ուղթ	1.46	0.2	1.26	0.38	0.65	0.79	0.49	0.80
Պլաստիկ	Փափուկ պլաստիկ փաթ եթ ավորում	8.1	7.7	7.7	6.42	7	7.38	0.60	7.51
	Փրփրապլաստ	0.02	0.06	0.1	0.02	0.04	0.05	0.03	0.05
	Խիտ պլաստիկ	1.72	1.2	1.12	1.12	1	1.23	0.25	1.25
	Այլ պլաստիկ	0.84	0.4	0.4	0.26	0.36	0.45	0.20	0.46
Ապակի	Ապակե փաթ եթ ավորում	1.08	2.9	0.8	1.8	1.3	1.58	0.74	1.60
	Այլ ապակի	0.26	0.1	0	0.3	0.1	0.15	0.11	0.15
Մետաղներ	Մետաղե փաթ եթ ավորում	0.36	0.26	0.14	0.36	0.21	0.27	0.09	0.27
	Այլ մետաղներ	0.34	0.22	0.4	0.56	0.2	0.34	0.13	0.35
Այլ ոչ օրգանական	Բոլոր այլ ոչ օրգանական	4.16	4.1	0.7	1.2	2	2.43	1.45	2.47
Վտանգավոր թափոն	Բոլոր վտանգավոր թափոնները	0.4	0.26	0.08	0.34	0.2	0.26	0.11	0.26
Խառը էլեկտրական	Բոլոր էլեկտրական առարկաները	0.14	0	0.6	0.1	0.15	0.20	0.21	0.20
Այլ	Փայտ	0.38	0.34	0.06	0.14	0.1	0.20	0.13	0.21
	Տեքստիլ	13.26	9.8	9.9	20.72	11.5	13.04	4.04	13.25
	Տակաշորեր, սանիտարական անձեռոցիկներ և այլն	2.9	2.3	2.46	1.72	1.8	2.24	0.44	2.27
	Այլ, որևէ այլ կատեգորիայի չսահմանափակումներ	1.08	1.5	1.22	1.36	1.05	1.24	0.17	1.26
Ընդհանուր կգ	491.82	100.84	99.13	97.85	96.81	97.19			100.0

Ծանոթություն. Սույն ռազմավարությունը մշակվել է Վանաձոր համայնքի համար և տվյալները վերաբերում են Վանաձոր համայնքին: